



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material











3370

ՃԵՌ

Ի ՎԵՐԱՅ


ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱԶԱԳԻՄՈՒԹԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՐԱՑԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ԿԱԼԿԱԹՒԱ

1845.





## Ա Ջ Դ

Առաջիկայ ճառս գառաջինն տպեցաւ ՚ի 1844  
ամի Բաղմամբիսի Վենետիոյ • զոր՝ Ազգասէր Վերա-  
սեսու շն Արշալուսոյ Արարատեան ազգասիրական  
պարտք համարելով, եհեղ յաշխարհիկ բարբառ-  
այնոցիկ կողմանց, և հրատարակեաց յիւրում  
Օրագրի • ուստի հեղաւ ՚ի մերս աշխարհաբառ վասն  
Ազգասէր Օրագրի տեղւոյս :

՚Ի վերջ ճառիս յաւելլաւ Յորդորակի իմն :

1821 թ. հունիսի 25-ին Ստամբուլի  
 Կոնստանդնուպոլիսի Սուլթանի Գրաստանից  
 Կոնստանդնուպոլիսի Կոնստանդնուպոլիսի  
 Կոնստանդնուպոլիսի Կոնստանդնուպոլիսի  
 Կոնստանդնուպոլիսի Կոնստանդնուպոլիսի  
 Կոնստանդնուպոլիսի Կոնստանդնուպոլիսի  
 Կոնստանդնուպոլիսի Կոնստանդնուպոլիսի  
 Կոնստանդնուպոլիսի Կոնստանդնուպոլիսի

# Դ Մ Ա Ն Ա Ր Ձ Ա Ն

Յ Ա Ի Է Ժ Ա Կ Ա Ն Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի

Հ Ա Ն Գ Ո Ւ Ց Ե Ա Լ

Պ Ա Ր Ո Ն Գ Ի Ի Գ Ո Ր Ի Ս Ա Մ Ե Ա Ն Ց .

Ճ Շ Մ Ա Ր Ի Տ Ա Ջ Գ Ա Մ Ի Ի .

Ո Ր

Վ Յ Ա Կ Ե Ա Ց Զ Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Ե Ի Ն Ե Ի  
Զ Մ Շ Յ Ն Ջ Ե Ն Ա Ի Ո Ր Պ Ա Յ Ծ Ա Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Մ Ե Ն Ա Փ Ր Կ Չ Ե Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի

Դ Ն Ո Ր Ջ Ո Ւ Ղ Ա .

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ր Ա Խ Տ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

Յ Ա Ր Ո Ւ Ց Ա Ն Է Ջ Ա Յ Ս .


Ա Ր Ա Ր Ա Յ Ե Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն .

# Դ Կ Ա Լ Կ Ա Թ Ա

1845

ገ. ማርያም ቤተ ክርስቲያን





Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ն Ե Ղ Ի Ն Ա Վ Ի Ն

Ւ Վ Ե Ր Ա Յ

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Յ Ա Ռ Ա Ջ Ա Ւ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն :

Մ Ի Ն Չ Ե Ի օրս շատ խնդիրներ ան  
ելել Ազգասիրաց ծողովքների միջում,  
թե ինչպէս Հնար իցէ ազջոյն մին ազգ  
կըթել, որ քաղաքական ու փիլիսոփայ  
ական գիտութենաներից յետ մնացել  
լինի. որպէս զի՝ մտքի վերաբերեալ  
գիտութեամբ Հարստանալով՝ մարմնոյ  
կողմից ևս երջանիկ կեանք վարի :

Շատանք հարեանցի մտածութեամբ  
կարծեցին թէ մեր ազգն կարող է այժմս  
ևս իւր վերնից տղխտու թխնն գէն գծի,

և իւր դեղերցիկ բազուի լուսամբն երևեր լինի աշխարհիս միջումն : Բայց այս առաւել մին ցանկութիւն է սրտի , քան թէ ուղիղ դատողութիւն . լսան զի՛ երբ որ աչքէրս բարձրացանումամ և վեց դար դէնն ամ անց կալման , տեսմանամ որ մեր սրտուական Ս. զգն միշտ տղխտութեան , տառապանոց և աղքատութեան մէջ շարչարած է : Ս. բքայիկ վարդի նման անուշահոտ սրտեղի մէջ և անուշահամ առուների մօտ անկած : Ունի վարդենին շառախղք , թեք , ճիւղք , ջլիղք , ճնկնէք , և ծլէք և ամենայն կերպով կատարեալ է . այլ ախանս . որ կանաչերոյ և տերեւ տարոյ ժամանակում մին էլ կանանես որ իւրն իւրն կուտի կլերջանայ : Ուտաի . տղխտութեան և

զան սզան սլակասութեամբք դազանու  
 ցած և կատաղած որդնեբիցն : Ս, յսպէս  
 է ահա՛ Ս, զգլխ ներկայէն վիճակն : Ս, բո՛  
 կտեսնես որ այսպէս մին կերուած և  
 սպականուած տունկ հետեւել կարող լի-  
 նելոյ համար՝ պէտք է ուշիարմատի չորք  
 կողմիցն ջուր տալ, վերէն կտած խոտերն  
 խլել զէն զձեւ, որդնէրն սպանել, և  
 անպէտ ճղկէրքն կտրել յատակել, որ  
 նոյն փշացած տունկն ուժ գտանի և  
 ծաղկի, և բոլոր աշխարհս ճանաչի թէ  
 այս տունկն Հայաստան աշխարհիա  
 եղեմատիպ դրախտին մէջ յԱստուծոյ  
 անկեալ, շատ սրողարեր և բարետեսիլն  
 է : Ս, յս ասութիւնքս սուելն ոչ թէ  
 հեշտ բան է, այլ պէտք է մահն աչքի  
 յանդիման ջանք անել, մշակել, վաս-

տակել և ճգնել : Պէտք է աշխատութիւնն ընդհանուր լինի , որ բոլոր Ազգն սկսի ծաղկել , վասն որոյ արժան է այժմուց այնպէս մին հիմն դնել Ազգի կրթութեան համար , որ եթէ մէք չկարողանա՞ք , գոնէ մեր որդիքն կամ մեր թուներն վայելնն բարեկենդանութեան օրէր , և ազգասիրացս յիշատակն օրհնեն :

Արդ՝ առանց ազգի սիրան ազգասիրութեան փութով յորդորել վասելոյ , անհնար է մեծամեծ փոփոխութիւնս առել ազգի միջումն , և գիտութեան , արհեստների և քաղաքականութեան միջբուսաւորել , և առաւել սլատուաւոր նշանց տալ զայն այն Տէրութեանց աչքումն՝ սրոց հովանաւ որութեան ներքոյ

խաղաղութեամբ ասլրման ան : Քանզի  
մեր Ազգն չէ կարող զարգանալ ուս-  
մանց և արհեստների մէջ մինչև որ ազ-  
գասէր անձինք չշատանան, որք միա-  
մտութեամբ և քաջութեան հոգւով  
ազգի սլայծառութեան համարջանան :  
Ուստի առաջիկայ ճառս զլուխ զլուխ  
կրաժանեմք : Առաջնոյ մէջ փոքր խօս-  
քով նշանց կտամք ինչ կերպով հնար է  
յորդորել զմերսն յազգասիրութիւն :

Երկրորդումն, թէ ինչ ինչան պատ-  
ճառներն՝ որ մինչև այժմ՝ արգել եղին  
Ազգխաղեղեցիկ յառաջադիմութեանն,  
և Երրորդի միջումն թէ ինչպէս հնար  
է արգելքներին յազթել, և թէ դեղ  
առելոյ ճարն ո՞րն է :

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱԶԱԴԻ ՄՈՒԹԵԱՆ

ՄԱՍՆ Ա

ԻՄ կարծիքն այ որ չափահաս մարդիք և նորա որ սկսած լինեն իւրեանց և աշխարհի օգուտն մտածել, դիւրին է ազգասիրութեան եռանդով վառվիլ. բայց սոցա կրակն բոցի պէս այ որ շուտ կվառվի և կխանչկի, որ մին փոքր քամի փչելով կբորբոքի և անսողանոց աչքն կխաբի. և թէ քամին հողմն շարունակ կերպով սասափել փչելու լինի, նորին փայլունութիւնն կխանչկի և կրկին կմթնի: Նա՛ որ յառաջ ազգասիրութեան կրակով իւր անձն տաքացած կ'կարծէր, զկնի խանչկիլէն մին փոքր սաքութիւն ևս չի ունենալ: Եւ

վախենալոյ բանն էն այ՛ որ այսպէս  
 մարդ էք ազգասիրութեամբ բորբք  
 վերուց յերա, դժուարին դործոց միջ  
 ևս կմտեն, ոչինչ բան իւրեանց աչքին  
 դժուար չի երևալ, կ'կարծեն թէ ա-  
 մենայն բանի կարող ան յաղթել, սա-  
 բերք վեր գծել, մովժէրի ուժն կատրել  
 իւրեանց ուրախութիւն կերևայ, որոյ  
 վասն՝ երբ որ իւրեանց եռանդուն կիրքն  
 բորբքով կորոտան, մեծ մեծ կառեն,  
 աջ ու ձախ վազ կտան՝ և ամենայն բա-  
 նէրի միանգամայն ձեռ տարով, սկսելն  
 ու վերջ տալն կուզեն խկոյն անել, բայց  
 թէ մին դժուար արդելք յանդիման  
 նէրն դոյ, և անյաջող ելից հանդիպեն,  
 խկոյն յերա կքաշուեն յուսակտուր: Եւ  
 դժուարութենից աչքնէրն վախեցած  
 լինելով, մին վախլուկ երեխի պէս յերա  
 կ'կան իւրեանց դերդրիկ յառաջադրու-  
 թիւնիցն, և շատ անգամ այնպէս կլինի,

որ իւրեանց և իւրեանց ընկերնէքին մեծ  
 փնասկստառճառեն, և ամենայնն մին խոր  
 անդունդի մէջ դահալ իժեխով կ'դձեն :  
 Արդ ամենայն բանից յառաջ հարկաւ  
 ւոր է մին ճար գտանել, որ աղգասի-  
 բութեան ևռանդն անշէջ միշտ վառ-  
 մնայ մերայնոց սրտումն, որպէս զի ան-  
 տի գոյացած բարիքն ևս ձիգ տեւեն :  
 Որոյ վասն անհրաժարելի հարկ ամ  
 համարում :

ՆԱ. 10՝ որ աղգասիբութեան առաքի-  
 նութիւնն անկու ի մերայնոց սրտի մէջ,  
 որպէս զի՝ որքան որ հասակն մեծանայ,  
 աղգասիբութիւնն արմատ տնայ ևս բլու-  
 նի, և սաստիկ քամփնանու դէմ կանդ-  
 նի, յաղթի և վայր չանկանիս Այս բա-  
 նիւ յարմար է դոյման Բագարատ ան-  
 ուամբ մի Հայի թուղթ, որ Պարսկից  
 Մարգարանաց ժամանակումն Աթէնքից  
 գրէլայ իւր բարեկամ Սուրէնին, յոր-

5370  
 գորելով զնա որ խբ որդւոց տղայու-  
 թեան ժամանակիցն սկսեալ՝ լուհե-  
 աւելելով կրթի ազգասիրութեան առա-  
 քինութեամբ, որ խբէնց քաջութե-  
 նից և կարողութենիցն չթուլանան, որ  
 այն ժամանակէն մարդկանց վառքն  
 էր: Գրի օրինակն այս է: Դու որ բը-  
 նակէլէլաս մեր հայրենի երկրնէրումն,  
 Սուբէն բարեկամ, որ մեր քաջազուն  
 նախնեաց բնակած տեղաբէնքն կալա-  
 տես, բռնիր քոյ տղէքոնց ձեռնէրիցն  
 և նշանց տուր նոցա մեր հարց գեղե-  
 ցիկ յիշատակներն, նշանց տուր մեծա-  
 մեծ քաղաքների աւերակքն, որ մին  
 ժամանակ շէն և անուանի էին և մարդ-  
 կամբք լցած, խկներկայ նոցա անունն  
 խկ մոռացիլէլայ, շի յիշման: Նշանց  
 տուր նոցա թագաւորական հոյակապ  
 շինուածքների քանդուած տեղաբէնքն  
 և սիրուն տաճարների աւերակներն,

որոց տխրալի շողքն մարդոյս սրտի  
 մէջն մին դող , ցաւ և սարսափ ան գը-  
 ձում . նշանց տուր սարէրն , բլրնէրն ,  
 դաշտէրն և բերդէրն , որոց վերայ  
 շատ քաջ պատերազմողք վայր ընկան  
 ՚ի սրտճառս նստանձու , գրգռու-  
 թեան և անմիտ շահասիրութան մին  
 քանի իշխաններն Լալով և ան քաշե-  
 լով պատմիր քոյ զաւակաց այն սղա-  
 լանքնէրն՝ որոց համար երբեմն մեր  
 Ազգն ողորմելի ծառայութեան մէջ  
 անկաւ . և մին խղճալի դէմքով և  
 ՚ի սրտէ ան քաշելով նոցին կակուղ  
 սիրտն սիրոյ կապով միաւորէր Ազգի  
 հետ : Ո՛վ բարեկամ , երբ որ Գերեզման-  
 նէրին մօտ այն ամբարտաւան բլրին  
 հասանես , պատմիր քոյ տղէբքոնց՝  
 թէ ինչպէ՞ս մին փոքր զօրքի միաբա-  
 նութեամբ և քաջութեամբն անկաւ-  
 կործանեցաւ Բէլ . որոյ անհամար այլ

անկարգ բազմութիւնն՝ Հայոց քաջէրէ  
սրամտութեամբն որպէս փոշի ջնջեալ  
ցանուեցան մեծ դաշտի երեսին : Անի  
բերդն հասանելից , Արշակունի Թա-  
գաւորնէրի գերեզմանաց մօտ , սովո-  
րացրո՛ւր նոցա որ չկարծեն թէ Ազգի  
բազմն և յաջողութիւնն նոցին ոսկո-  
նէրի մէջ մտած թաղուէլան : Տես  
բարձր աշտարակն , և մտոյ բեր մեր  
նախնի Արամն , այն արի հայրենասէրն  
և չվաստակող Նախարարն որ իւր Նի-  
քար թշնամուն բռնելով և բարձր աշտա-  
րակնէրի ձեռումն մեխելով , աշխարհի  
և երկնային գօրութեանց մէջ խայտա-  
ւակ արար : Նաևս տես Մարաց և Կով-  
կասու սարէրն , Պանտոսի և Միջերկրա-  
կան ծովի եզերքն ( Կասպէն ) զորս մեր  
տէրութեան սահմանն էր շինել  
քաջս . . . Սակայն այս բոլոր բաներից  
յետ՝ երբ որ չոք կողմից ականելով ցիւր

ու ցանն և հետի տեղաբէնքում՝ բնական  
 տեսնես .քոյ Աղգդ, Հայրենիքդ առանց  
 կերպարանքի՝ որոյ և ոչ վայելչու-  
 թեան գերեցկութիւնն կարեայ, ընց  
 նոցա հետ և առն թէ Աղգն ինքնին  
 եղև սրամձառ իւր թշուառութեանն,  
 վասն զի հեազանդ չկացաւ օրինաց  
 թաղաւորնէրին զորս Աստուած մեր  
 վերայ տէր էր կարգէլ: Քեզ ասեմ,  
 իմ Սուրեն, զաւակնէրիս միտքն աղայ-  
 ութեան ժամանակիցն աղգասիրու-  
 թեամբ վաւեր, որ շինի թէ վայրե-  
 նի (ջանգւն) անբաննէրի սէս՝ ծուռու-  
 թեք ոչ քով տկաննն իւրեանց աղգա-  
 կից եղբարցն, և անկա խորհուրդք  
 իւրեանց միտքն բերեն:՝ Այս է քաջ  
 Յաղարասի գրած գրի օրինակն որ  
 ասասիկ խոր կազմի ճնողաց սրանն՝  
 որ իւրեանց զաւակնէրն կրթեն Հայրե-  
 նասիրու թեան առաքիտութեամբ: Այլ

ես ձեզ կազաչեմ ո՞վ դաստիարակք և  
 վարժապետք մանկանց ազգիս . ծնողք  
 իւրեանց մատաղ տղէքոնց ձեր խնա-  
 մոցնան յանձնել, Աստուած ձեզ շատ  
 զաւակների տէր է արարել . ընչո՞ւր  
 համար . . . որ ղեկավար (սուրմնչի) լի-  
 նէք նոցին խղճմտանոցն . որ նոցին  
 սրտի մէջ գրէք անխոփոխելի ճշմար-  
 տութիւններն և սղգասիրութեան օ-  
 բնէքնէրն : Երբ նոցին սիրան և միտքն  
 դեռ ազատան բոլոր կանխակալ ատե-  
 լութենէ և ծուռութեք սկզբունքնէ-  
 ընց՝ սովորացրէք նոցա մեր նախնի  
 քաջաց վարքն և ցաւալի դիպուած-  
 նէրն , որ հեռի կան զգուշանան վաս-  
 սկահասութենէնէրիցն և նոցին առաքի-  
 նութեանցն նմանող լինեն : Ասէք նո-  
 ցա թէ երբ մեր աշխարհիս մէջ աշխար-  
 հաւերսող անասնձ յօժարութիւնն կա-  
 մաց (Ինչո՞ւնստանաւիանն) կտիրէր , խելք

և քաջագործ մարդիկներն չկարողացան դիմանալ նորին բռնութեանն : Ուստի անցեալ բաների պատմութեամբ ուղղեցէք զնոսա, որ Հայրենասիրական առաքինութեամբ, Համ խրէնց և Համ աշխարհքի երջանկութեան պատճառ դառնան : Արդ ձեր վերայ ապաստանած է Ազգիս բաղգն ու ծնողք և վարժապետք, դուք էք ազգասիրաց յոյն, առաջնորդեցէք նոցա ազգասիրութիւն սովորեն, լաւ կերպում տպաւորեցէք զայն՝ նոցին սրտի մէջն, և դուք արժանապէս կատանէք շնորհապարտ Ազգացս գովութեան վարձքն ձեր :

Երկրորդ՝ Հին ժամանակի Հայերն խրեանց ազգակիցներին յազգասիրութիւն յորդորելէ Համար, քաջ բարերար մարդկանց քաջութեան գործքերն կդառնին՝ սաղէր և պատմութիւններ

շինել լավ, և նոցին յիշատակովն կղուար-  
 ճանային. բայց մեր վերջի ժամանակ-  
 ներումն վախլուկութիւնն խափանեց  
 այս գեղեցիկ սովորութիւնն. սրոյ  
 վասն շատոնք ևս սառելան մեր նախ-  
 նեաց և ազգի սիրէն: Ասան զի հաս-  
 տատ գիտեմք որ երգք խաղէր և բա-  
 նաստեղծական սլատմութիւնք աւելի  
 կյորդորեն ժողովրդոց սիրան, քան թէ  
 ուրիշ գրուածներ. և մեծ բանն այն  
 է որ բանաստեղծներն իւրեանց քնա-  
 րովն (սուշ) յաւելի գործ գործեցին,  
 քան թէ աշխարհակալներ իւրեանց  
 զէնք ու աղեղովն: Ասանորոյ ներկայ  
 ևս յազգասիրութիւն յորդորելէ հա-  
 մար մերայինքն սկտք է այս հնարքն  
 բանացանեն: Իրաւի քերթողի բանաս-  
 տեղծութիւնն կեննի ժողովրդի սրտի  
 մէջ լաւ կերպ ազդեցանել, եթէ քաջ  
 մարդքոնց գործքերն թէստորոնի մէջ

ուզենան երգել , լաւ կերպում նկարագրելով մնի կիրք և տրարածներն տեսնողներաց յառեջբում :

Երբորդ՝ մեր նախահարց յիշատակներումն կարգմանամբ թէ Արամ՝ որ է նախակին օրինակն ազգասիրութեան , փոքր Ասիայի կողմարէնքում բնակած Յունաց միաբանութիւնն քանդելոյ համար , պատուիրէց որ իւրեանց լիզուն թողուն և Հայերէն խօսին : Քաջ իմաստուն և քաղաքազէտ մարդոյ խորհուրդ , ճարտարութեան հնարք : Ասան զի այն սրամիտ մարդն քաջ գիտէր , որ այս հնարքով կարող է նոցա ցրուել և բաժանել յիրարից : Եւ շատ իրաւամբ , ընդէր՝ որ լիզուն է , որով միայն հաստատ կպահուեն ազգային , քաղաքական և եկեղեցական օրէնք : Ազգային լիզուն է միայն՝ որ համազգեաց սէրն կվտռի :

Կնչպէս թէ որ ազգակից եղբարք իւրեանց հայրենի երկրիցն դուռ գնալով ծովի և ցամաքի երեսին պատրան երկրէց երկիր գնան, յետոյ յետ դառնան գան յիւրեանց երկիրն կրկին միմեանց հանդիպեն, տես նոցա ուրախութեան ատօնձանն : Արաքացին այնքան չի ուրախանալ անուշահամ աղբիւր և ջուր գտանել մին չոր անտառի այսինքն (չմեղսի) միջում, որքան որ սոքա յերար հանդիպելովն, Նաւաւարն՝ լոյնատարած ուկիանոսն կրտսեր անց կալուցն յետ այնքան չի ուրախանալ իւր հայրենեաց աշտարակն տեսնելով, որքան սոքա միսկանց գտանելով : Տեսնես միսկանց կուլով կեդանն, իւրեանց մայրենի լեզուովն կխօսեն սուանց կուշտանալու, օտարութեան, այսինքն (չարհոբեան) մէջքաշած նեղութիւններն այլ ևս չեն

մտածելէց , անուշ հայեցումսով մի-  
մեանց երես կականեն , և չին ուղելէց  
բաժանուիլ յիրարից : Եւ երբ որ  
կրկին կըստիարուին յիրարից բաժան-  
ուիլ , ձեռ ձեռի տարով 'ի սրտէ արտա-  
սուք վերկածեն և միմեանց սիրտ  
տարով կասեն , « Այ եղբայր , բարով  
կրկին միմեանց մեր հայրենի երկրումն  
հանդիպենք » : Արդ՝ խմացիր տես  
աստուածատուք պարգևի զօրութիւնն ,  
որով 'ի սրտէ միմեանց հետ կապմա-  
նան սղգակից եղբարքն :

Ա երջասպէս՝ տեսէք որ մեք յառա-  
ջէն հին ժամանակումն օտարների  
ազգութիւնն քանդելոյ համար ստի-  
պումինք նոցա՝ որ իւրեանց լեզուն մի-  
ռանան և մեր լեզուն սովորեն . ներ-  
կայ ընդհակառակն՝ խնդրեմ՝ ներքէք  
յանդգնութեանս , մեր ազգն ինքն  
իւր ազգութեան հիմն քանդումայ :

նայն հնարքն իւր վերայ է բանայա-  
 նում, այսինքն իւր լեզուն թողմա-  
 նայ իւր յօժարութեամբն և այլազ-  
 դի լեզուայ խօսման : Ասան զի մեր  
 ազգն զանազան երկրնէրում ցրուած  
 լինելով, փոքր փոքր մուամանայ  
 իւր մայրենի լեզուն, այլազգական  
 բառէր անխտիր գործ կածի հայերէն  
 լեզուի մէջ, և երբեմն ևս մերայն գեղե-  
 ցիկ, հարուստ և գերապանծ լեզուն  
 բոլորովին մին կողմ թողնելով՝ Յունա-  
 բէն, Գաղղիերէն, Իտալիներէն և կամ  
 Տաճկերէն կխօսեն : Եթէ այդպէս է,  
 մի լայք ուրեմն Ազգասէբք, Ազգա-  
 տեաց եզբարց ձեռնից կրած անտանելի  
 նախատանաց համար, և մի ունայն  
 տեղն ողբայք մեր Ազգի ցրուելու և  
 բաժանուելու վերայ :

Ներկայէս ժամանակու մն մեր ազգու-  
 թեան ապացոյց և նշանն միայն մեր

լեզուն է, եթէ այն ևս միջիցն բառ-  
 նանք, էլ հայ չենք, հին քաջազուն-  
 ների սերունդք և զաւակքն չենք, այլ  
 յետոյէն ելած անազգ բարբաբոսնէրկցն  
 անք, այս կողմ՝ այն կողմ՝ հողմոյ  
 օյսինքն ( ԿՍԾԿ ) ցրուած տերևնէրի  
 պէս, որոյ հայրենիքն և նախամայր  
 ծառն ևս յայանի չեն : Եթէ Հայոց մի-  
 ջիցն հայկական լեզուն բառնանք, ազ-  
 դին մերաբերելի բոլոր սախորտ թխնքն  
 յետոյ մեր աչքին վատ կարևան : հա-  
 մազգի եղբարք միմեանցէ կբանդվին  
 կբաժանուեն, որպէս երբեմն Բաբելո-  
 նի մէջ աշտարակաշինու թեան ժամա-  
 նակումն : կատեն խրեանց հարազատ  
 եղբօրն, և թափառականի ( շԵԲԵԷ )  
 պէս սրտելով հայրենի երկիր չունե-  
 ցող ազգերից պիտի համարուին, ներ-  
 կայէս դնչուա ( ՋԵԳԻՆԱՆԿ ) Գաբա-  
 ւանացւոց պէս : Արդ ազգու թխնն

պահելէ համար, և մեր Ազգն յազգա-  
սիրութիւն յորդորելէ համար, հարկա-  
ւոր պարտքամ համարում, որ ամենե-  
քեան ջանք առեն հայեար լեզվում  
լաւ մարտիկն, և զզուշանան օտար  
ազգի բառ մեր հարազատ լեզուի մէջ  
չխողեն:

Չորորդ ինչպէս որ մինն ձիգ ժամա-  
նակ աչքն չոսած ականի մին լուսաւոր  
մարմնի, և այնու հետ աչքն յետ  
դարձնի բոլոր արարածք իւր աչքին  
միտնած կարևան, որոց գեղեցկութեան  
չափն չի կարողանալ լաւ կերպում  
խմանալ, այսպէս մեք Եւրոպացոց  
ամէն ազգաց ականելով, կոտանենք որ  
նանցանէ մին քանխան գիտութեան,  
արհեստների և քաղաքականութեան  
մէջ յառեջան ընկել, և ամենայն բա-  
րեմասնութեամբ հարստացելան, մեր  
աչքերն կխողին կսկիւնան նանցան

փառաց լուսաւորութենիցն, յետ այնու  
 մեր Ազգին ականելով կհամարենք  
 զուրկան մնացել այն փառքերիցն և  
 մի՞թիւն ու վատ բաղախ վիճակվէլ, որոյ  
 վասն յետ կքաշուենք կհեռանանք և  
 մեզ Հայ ասելն ևս կամաչենք, զուցէ  
 եթէ հարկն ևս պահանջի կջանանք մեր  
 վերնից դձել Հայութեան անունն,  
 որպէս թէ մեզ Գրէք, Ֆռանախղ կամ  
 Իտալացի զաւամ տանք՝ մեր բնութիւնն  
 ևս կփոխուի, և մեր միտքն կլուսաւոր  
 վի դիտութեամբ և խմաստութեամբ :  
 Չէ, չկարծես թէ առիւծի կաշով  
 քո անձնիդ պակասութիւնն կարող  
 կլինես ծածկել : Այն անմտութեան,  
 որոյ միջում արեւմանայ թէ մեր Ազգն  
 արմատացել է, վասն զի Չխուղն  
 Չխուղ ասվիլ չի տխրելէց, ոչ Ստորին  
 ասորի, և ոչ Բարբարոս ազգերն կա  
 մաչեն բարբարոս կոչուիլ, միայն

Հայն է որ այս թեթեամտութիւնն  
 ունի : Միայն խորթ (Յակոբեան) խիզանն  
 կամաչեն իւրանց ճնողաց անուանէ ,  
 անհարազատ անխելք տղէքն՝ իւրեանց  
 ճնողաց կանարդեն վասն նոցին տղի-  
 տութեան և աղքատութեան : Համա-  
 բնք թէ նոքա (այսինքն մեր Ազգն) թան  
 ճրամիտ և տխմարան , այլ դու ուստի  
 սովորեցիր արհամարհել և ատել քոյ  
 ազգային եղբարքն , եթէ էնդուր հա-  
 մար որ տխմարան և մին փառք չունեն ,  
 ուրեմն իմացիր որ ոսկի և արծաթն  
 ևս երբեմնապէս կժանկոտեն և իւրեանց  
 յառաջէն գեղեցկութիւնն կըկորցանեն ,  
 մաքրելը վերնի եղան և ժանգն չորիւր ,  
 կտեսնես որ ոսկին իւր պատուականու-  
 թիւնն չի կորցրել և արծաթն նոյն յիս-  
 տակ պիտանին է : Այսպէս իմացիր և  
 մեր ազգի համար : Եթէ դու ուզես ա-  
 նաչառութեամբ և բարի մտքով խնդ-

բել և քննել ազգիս բարի հանգամանք-  
 ներն, դիւրաւ կերևան քեզ, բազումաւի-  
 այլ արևելեան ազգաց հետ, այն ժա-  
 մանակ կիմանաս Ազգիդ պատուականու-  
 թիւնն, աչքովդ մին անցկացրու ը կար-  
 դանոր աշխարհագէտ ճանապարհորդ-  
 ների գրքերն և միտ դիր նանցան ասա-  
 ցածնէրին՝ տես Լարդ Բայրլն՝ երևելի  
 քերթողն Անգղիացի, ինչ է ասում,  
 « Այս աղնուական Ազգն (Հայոց) համե-  
 մատ գտաւ ՚ի չափու հրէից և Յունաց  
 տառապանաց և գերութեանն, բայց  
 ազատ մնաց առաջին ազգի քարասրտու-  
 թենիցն և վերջնի վատութենիցն, Այս  
 ժողովուրդն հարստութեամբ լցվէց՝  
 առանց մուգաթ ուտելոյ, և գերու-  
 թեան միջում՝ առանց խարէութիւն  
 բանացանելոյ, իւր փառքն այնքան  
 յաւելացոյց, որքան որ կարելի է որոք  
 ազգի ստանալ, . . . Դժուարին է արև-

ման ինձ մին այլ ազգի յիշատակա-  
 բաննէր դասնել, որ այնքան ազատ  
 լինեն մեծամեծ դժբաղդութեանէ ինչպէս  
 Հայոցն է, վասն զի նոցին առաքինու-  
 թիւնքն խաղաղութեան պտուղան, և  
 պակասութիւնքն բռնակալութեան ազ-  
 դեցութիւնք: Սակայն նանցան բաղդն  
 (իբաւիցաւ ի բաղդ) ինչպէս որ ներ-  
 կայ կայ եթէ մինչ ՚ի վերջ ևս նոյնպէս  
 մնայ, իւրեանց երկիրն պիտի խոստու-  
 վանիմք որ աշխարհի մէջ ամենագեղե-  
 ցիկնէրի մինն է, և իւրեանց լեզուն՝ ա-  
 ռաւել ախորժիլի լինելէ համար, ոչ  
 ընչուր չի, կարօաման, բայց միայն յա-  
 ւելի մտադրութեամբ վարժելոյ և միտ-  
 զներոյ:

Տես Բարաթթա Իտալիացու ասու-  
 թիւնն ևս. “Բարակամիտ են Հայերն և  
 շատ աչքաբաց, զօրաւ որ խելք ունենա-  
 ամենայն բանի մէջ անսխալսելի հաւ-

տատու թեամբ կհամբերեն, որով կյալ-  
 թեն մտքի վերաբերեալ ամենայն բա-  
 ներիս Եւ այս ասու թեանս գեղեցիկ  
 վկէն՝ ոչ թէ միայն նանցան ասետրա-  
 կան փոփոխութեանց (որոյ մէջ քաջ  
 տեղեակ և յառաջագէմ են) ճշմարտու-  
 թիւնն է երաշխաւոր, այլ նաև ձեռ-  
 նով շինած վարպետութիւններն, որոց  
 մէջ այնպիսի մին յաջողակութիւն նը-  
 շանց կտան, որ շատ անգամ մեր վար-  
 պետանուն ևս կզարմացանեն, որք թէ-  
 պէտև լաւ վարժած լինելով, իւրեանց  
 արարած անհամեմատ շահովն Հայերից  
 կգերազանցեն՝ վասն զի սանքան (Հայ-  
 երն) զուրկան այնպիսի վարժատաննե-  
 ռից, և ինքն ինքեան կսովորեն առաջ  
 կգնան զարմանալի զուարթութեամբ  
 և համբերութեամբ . . . Ինչպէս որ  
 Հայերն գիտութիւն սովորելէ համար  
 շատ յարմարութիւն ունեն, նոյնպէս

և քաղաքականութեան ևս մտքներն  
 քաց և 'ի բնէ տեղեական, և այս տեղե-  
 կութիւնն 'ի ծննդենէ ունեն, և մարդ-  
 չի սխալելէց եթէ ասի սբ չկայ մարդ-  
 կային խորագիտութիւն այնքան քա-  
 ռակ և անհակառակելի որպէս որ Հայ-  
 ոցն, մին ժողովուրդ է՝ որ կարօտու-  
 թիւն չունի Մաքիաւելլայի քաղաքա-  
 կանութեան խորին ծածուկքն սովորե-  
 շէ համար: Սակայն այս հնարքումն շատ  
 բարդաւորան, վանցի այս զարմանալի  
 և շատ վտանգաւոր խորագիտութիւնն  
 ուղիղ կերպան բանացանում, և կամ մեծ  
 աւաքինութեամբ և սլարկչաութեամբ  
 բան սանձում: Եւ այս բնութեան  
 սլամ առանձին սրարդենէրի մինն է  
 Հայաստանի մարդկանց, որոյ վանն այս  
 զանազանութիւնն կայ 'ի մէջ Յունաց  
 և Հայոց, որ սանցան քաղաքականու-  
 թիւնն սրաչտարանողական է քան թէ

արշաւական, և Հայն խրատ լինելով  
որ ոչինչ մարդ չի կարող որոք եղանա-  
կաւ իւրն խաբել, ինքն ևս թէ պատա-  
հի՛ շատ փոքր անդամ, թէ ո՛չ՝ երբէք  
այլում որոգայթ չի լարելէց ։”

Եւ էյրիէն Գաղղիացին սյապէս է  
ստում։” Սրամիտ է Հայն և խելօք, շատ  
չափաւոր և վաստակասէր, և փող դա-  
սելէ համար՝ աշխատութիւն և ներդու-  
թիւն իւր աչքում ոչինչ չի երևալ. և  
իւր ստացուածքն պահելէ կերպն խրատ  
է։ Սմենայն բանից յաւել վաճառա-  
կանութեան յեանայ է. որում լաւ  
տեղեակ է”։

Սյա օրինակ նաև Լա Մարթին կխօ-  
սի՝ Սրեւելեան կողմում իւր արարած ճա-  
նապարհորդութեան գրքի միջումն ։

Եկ, ուրեմն էստով խնայիր քոյ Ս.Գ.  
դի պատուականութիւնն և վառք տուր  
նմա՛ որ քեզ այս Ս.Գ. է եղբայրակցու-

Թեանն արժան է արարել : Այլ թէ մի-  
ուս անգամ ուղենաս արհամարհել . քոյ  
ազգին վասն նորին թշուառութեան և  
ազխտութեանն, և նոյն մտքիդ մէջ կողդ  
գէժ տաս մնաս և Հայի անունն, և Ազ-  
գիդ անունն արհամարհես, թող ուրիմն  
դուրս գնա՛ նորին սուրբ հարազատու-  
թենիցն, և գնա՛ ազգատեցութեան ա-  
նարգ անունն ժառանգիր, և համարվիր  
ազգ և հայրենիք չունեցող ժողովրդոցէ :  
Տար . քեզ հետ բոլոր անմխա ազգատեաց-  
նէրին ևս՝ որ արգելք չլինէ . ք Ազգասի-  
րաց յաջողակ ընթացքին :

Իսկ դու ազգասէրդ, երբ որ այլ ա-  
մենայն ազգաց տկանես և տեսնես փա-  
ռաւորն և անարգն, իմաստունն և տը-  
գէան, հարուստն և աղքատն, մխտդ բեր  
որ ամէն ազգ և թաղաւորութիւն ան-  
հրաժեշտ վիճակած են փոխփոխութեան  
յամենատէր Ստեղծողէն, էն ժողովուրդն

որ իւրն խմաստութեան գեղեցիկ գարնան մէջ է համարում, և ամէն կերպ արհեստներով լցած, թող շատ չուրախանայ, գուցէ ձմեռն մտկացելայ վերայ է հասէլ: Իսկ դու որ քոյ Սղգին տգիտութեան և տառապանաց ձմեռան մէջ ես համարում, հաստատ լեր, որ խմաստութեան գարնան գոնէրն կամաց կամաց կբացուեն և դիտութեան հասն կսկսի բուրել՝ դրտիտի նման շայաստանի տեղարէնքումն:

Սղաչեմ՝ զձեզ, ո՞վ ազգասէրք, երբ որ Սղգին ընդդէմ՝ դառն և կսկծելի նախատինք լէք ձեր ազգակցացէ, աչքինէրդ երկինքն գձէք: հոգւոց հանելով յուսացէք՝ ի՛նչա, որ կարող է լուսաւորել մարդոյս միտքն և այնպիսի ճանապարհներով առաջնորդել, որ երանութեան բլուրն տանի:

Երբ որ այս յուսահատելի խօսքերն

լառւմ լինէք, թէ «Հայոց բազմի աստղն  
 խաւարէլ է,» չվախենէք, քանզի ազգա-  
 սիրաց թիւն օրէց օր յաւելանալու վե-  
 րայ է: Այն ժամանակ յայտնասէս կը-  
 տեսնեն՝ որ մեր փառաց արեգակն խա-  
 ւարած չի: և ո՛չ իմաստու թեան արու-  
 սեակն է կորէլ մեր Ազգի միջիցն, և  
 կամաչեն:

Երբ կըսէք թէ «Հայոց ազգն իւր  
 վաճառականու թեամբն կնամնի ան-  
 խոնջ և վաստակատէր մըջեմն, որ յան-  
 կարծ մին դիպուած սրատահելէն, շշմե-  
 լով և իւր բունն կորցանելով, ցորէնն  
 բերանում բռնած դաշտի երեսին ձիգ  
 ձիգ կգնայ և իւր բունն չի հասանելց,  
 վեր կելնի բլուրն և վայր կընգանի, այս  
 կողմ այն կողմ յուսահատելով վազ կը-  
 տայ, իւր եղբարց յետնէն յուսալով ման  
 կ'գոյ և անյոյս մնալով, և անցաւորացէ  
 դարձուրելով մին քարի տակ կգաղվի

և կմեռնի կմնայ նոյն տեղումն առանց  
 մնից օգնութիւն գտանելոյ, երբ այս  
 խօսքն ըսում լինես, կրկին ասեմ, ու  
 բիշ բան չառես, այլ աչքերդ երկինքն  
 բարձրացրճւր, հոգւոց հանիր արտա-  
 ուերով, որ Ամենողորմ Աստուծոյ սիրան  
 կակղի, և այն թագաւորնէրի Բարեսէր  
 խնամքովն՝ որոց հովանաւորութեան  
 տակումն մեր կեանքն վայելումանք,  
 հովուի սրահի քեզ իւր ձեռաց շվաքի  
 տակումն և առաջնորդի գէպ խմաստու-  
 թիւն և ՚ի խաղաղութիւն :



Մ Ա Ս Ն Բ :

ՅԵՌԵՄ, ԶԱՒԻՄ ՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ



Աշխարհի չորէք կողմն մանեկող ճա-  
նապարհորդներն շայտցներկայէս հան-  
գամանացն մին կերպարանք ուղիւղ  
տալ, ասուման, այս ազգն եռանդուն է  
և աշխատասէր, պարապ կեանք անցու-  
ցանելոյ հետ թշնամի, և ամէն բանի կա-  
րող, ոչինչ բան չկայ որ շայի կարողու-  
թենից դուս լինի, իւր անխոնջ համ-  
բերու թեամբն ամէն դժուար արգէք-  
ների կյաղթի, աչքաբաց է և իւր սրա-  
տես անսողութեամբն ամենայն ազգից  
կ'գերազանցի շահասէր շայն, փող դա-  
տելէ համար աշխարհ ման կ'գոյ, առանց  
վատասակելոյ ամենայն տեղ կ'պտտի և  
ամէն տեղ կ'հասանի, իւր որ գնացի

էստանց մին է ասում՝ տեսի որ նոյն երկ-  
 րի վաճառականութիւնն Հայերն իւր-  
 եանց ձեռնին դրամէլ : Բօքնիայ, Սու-  
 մատրի և Չամու կղզեանս վաճառա-  
 կանաց մէջ ողջիցն հարուստ Հայերնան :  
 Հնդկաստան, Պարսկաստան և Կովկասու  
 երկրնէրի մէջ առաջի տեղն Հայոցն է : և  
 կղարմանանք Կանթօնի մէջ ևս Հայ վա-  
 ճառական տեսնելով : Թէ որ այս աշխա-  
 տասէր ազգն տեսութիւնն ունենէր՝  
 վաճառականութեան մասին Անդղիաց-  
 ւոց հեռ ևս կարող կլինէր դուրս դնել  
 յաղթել, վասն զի Ափրիկէի միջին  
 երկրնէրի մէջ, ուր տակաւին Անդ-  
 դիացւոց սան չէր մտել, Հայերն նախ  
 գնալով նոյն երկրի բարութիւնքն իւ-  
 րեանց ձեռն գծեցին, և բոլոր Եւրո-  
 պոյի վարպետ դարձան վաճառաշա-  
 հութեան առուարի մէջ : Այս ամենայն  
 բարեբազուութիւնքն իւրեանց մտաց

Հաստատու թեան, սրտի անյայթելի  
 քաջութեան, և մարմնայ սլիթկ կազմու-  
 թեան և բարեխառն բնաւ որու թեան  
 հետ միասին, իւրն յարգելի և պատուա-  
 կան է, արարելի առաջի մեծի Տէրու-  
 թեանն Օսմանեան, որոյ վանն Հայերն՝  
 սկզբից մինչ օրս իւրեանց ձեռնու միան  
 պահել թողաւ որական գործոց տես-  
 չութիւն, այլ և այլ կողմարեւելի կու-  
 սակալաց (Գաղտնի) հազարապետութիւնն  
 (Էջեմ-Քան կամ Ծաւուղի-Քան) գորքէրի  
 և բանակների ամաստիք և գործակալու-  
 ին և ձեռագործ արհեստների միջ բոլոր  
 Արեւելեան ազգերից գերագանցած են ։  
 Իարձեայ՝ Ռուսաց և Պարսից երկրնե-  
 րումն Եղիարատի միջ Հարկաւորան Հա-  
 մարման Հայերն՝ քաղաքաց և գեղա-  
 բնիքի շինու թեան և պայծառութեան  
 համար ։

Սակայն՝ սոսա մին կարևոր խնդիր կայ

Հարցանելոյ . թէ ընչուցից է որ այս-  
 պիսի մին Ազգ պատուականու թեամբ  
 գերազանցած՝ ներկայ ուսմի , դիտու-  
 թեան և խմատու թեան կողմանէ այն-  
 քան ազգատ է մնացել : Թէ որ ամենայն  
 քան իւր ձեռնից վեր կ'դոյ , ուրեմն  
 ընդէ՞ր իբրև ազէա և անարուեստ ար-  
 Համարուման իւրն՝ իւր նախատողնէրն ,  
 թէ որ խելօք և վարպետ է աշխարհային  
 դիտու թեանց և ուսմանց մէջ , ընչո՞ւր  
 Համար սնուսու մնու թեան իստարի մէ-  
 ջայ մնացել : Ժամանակ է այժմ՝ քրն-  
 նել և տեսնել , թէ ինչ՞ պատճառա-  
 մեր Ազգն ուսումնասիրու թեան Հանք  
 չի առում , և քաղաքականու թեան  
 այսինքն զուե՞րն մէջ յետայ մնացել :

Ժամանակի Հանդամանքն , աղքատու  
 թեան վիշտն , և եղբարց յերարից բա-  
 ժանու և ին՝ ինչպէս որ տեսնանա՞նք , մեր  
 Ազգին այս վիճակի մէջն ան դձէլ :

Ասացինք ժամանակի հանգամանքն,  
 վասն զի՝ Բագրատունի թագաւորնէրի  
 ժամանակիցն սկսեալ, շայոց աշխարհն  
 մին ցաւալի տեսարան է եղէլ : Ինտի  
 յառաջ՝ հանդարտ ծովի կ'նմանէր, իսկ  
 այն քարըքանդ ժամանակնէրումն՝ Ա-  
 րեւելից և Արեւմտից, մանաւանդ թէ  
 չորեքկողմից բարբարոս ազգաց մովջէ-  
 րն յասպատակու թիւն (Լ՝Ե՝ ԽԵԼ) ին  
 վազ տալման մեր աշխարհքն, և հե-  
 ղեղնէրն (ՔԺ ԸԵԵՆ) սաստիկ սրնթաց վազ  
 տալէ ժամանակումն, ամենեցուն զար-  
 հուրեցանումն : մեր դիւ ցաղուննէրի  
 հրաշալի շինութեանցն՝ թիթե լաստա-  
 փայտի պէս մովջէրն մին մին խլումին  
 և անխնայ քարէրի տալով կոտրասու-  
 մին : և խեղճ նաւաւարքն՝ այսինքն  
 Նոզն, վերջի շունչն հասած մահի եր-  
 կիւ զովն պատած սուշարած մնացելին :  
 Այն ահեղ սպիկի միջումն, այն ցաւալի

տառ տպանայ միջու մն, ականեր մի տես  
 նաւախարաց ողորմելի տեսիլն, շա-  
 րնք ծովի տակնին դնաման կորմանին,  
 միայն սակաւք տկար փայտին ապաւի-  
 նելով իւրեանք լոկ իւրեանց ազատել-  
 նին ջանաման, և հազիւ մին քանի հո-  
 դէք՝ կազ ( Եւսե ) , կոյր ( Կոյր ), և անդամ-  
 անին կտորատու ած, այն մեծ ծովի կամ  
 ( Զմեգաւ ) կրղինանու քնարն ընկան տկար  
 և թալանած, յորոց միք՝ խեղճ և ար-  
 կար ժողովուրդքս սերելով ( Ծնել ), այ-  
 ռաջամք եկել Եւփան, . . . մեր վարպետ  
 ղեկավարքն ( Կոյրանելին ) և սրատես սաւաջ-  
 նորդէրն՝ ողջն էլ հեղեղեկելի միջու մն  
 կորան, և մեր երկիրն՝ որ աստուածա-  
 տուր պարզեօք լցած էր, այնու հետ  
 սկաւ միշտ դողար երեւոյլ քարքքանդ-  
 աւոյլ սպառնալիօք Եւրո՞ րով որ իւր  
 տկան ջոյն էտանք լսելայ և էտանց նր-  
 ման սպէսալի սրատահմոնք աչքով

անակ լայ՝ կարող է արդեօք լուրն քա-  
ջալերել և միւս անգամ այն երկիր դալի  
ճովն մտել նաւով :

Սկանիւր որ՝ բռնաւ որաց սպանեալիք-  
նէրն թշնամեաց յարձակմունքն, յան-  
կարծաճաւ ասաւապանք և ներդու թիւն-  
քրն, ազմուկ և աշխարհաց կործանմուն-  
քրն, պատճառ դարձան մեր թշուառու  
թեամն որ շուտ անցաւ որ և թեթե  
թշուառու թիւն չի, այլ երկարատե և  
ընկճեցուցիչ (Նուսէր) : Ասոն զի՛ յի-  
րար յեանայ մեր Սողի քաջած դրկանքն՝  
անխարատելի մին թմրու թիւն և լախ-  
լիու թիւնան դձել մեր վերայ, որ ամե-  
նայն բանից մարդոյս սիրան կորելայ  
ասարման. այնքան՝ որ մեզ մտանալ-  
ան ավել քաջու թեան խորհրդեհքն և  
գործերն. որպէս թէ՛ ծուլութիւն, ան  
մտութիւն և անյառաջադէմ կեանքն  
մեզ հեա միասին ծնած բնաւորութիւնք

Իցենս Եւ յիրաւ ի քանդի՝ քաղաքնէրի  
 կործանելովն և հայրենի յիշատակաց  
 կորնելով իմացանք թէ կարելի չի, որ  
 երևելի գործքէր և համբաւ մեր երկրի  
 միջումն հաստատուն մնան և յաւ խոեան  
 տենն, մեծ աշխատութեամբ կուտած  
 ապրանաց և ստացուածոց յափշտակեալ  
 կորնելն, շատ խոր տարաւորէց մերայնոց  
 սրտումն, թէ շատ անեղէն ո՛չ թէ միայն  
 աւելորդան՝ այլ նաև շատ կրքէրի սրատ-  
 ճառ, և իւրեանց կենաց ևս մեծ վտանդ :  
 Այս թմբու թիւնն մինչև այս մեր օրէ-  
 րն ևս տեւումայ այնպէս որ ամէն  
 մարդ՝ անփորձ և վախժուկ, ամենեին  
 մին բանի գործի ձեռ չի տարման, վա-  
 խենալով գուցէ վերջումն չաջողի Եւ  
 քն աստիճաննայ հաստցրել մեզ այս  
 անիծեալ թմբու թիւնն, որ մեր մտաց  
 աչքի յառէջքում մին վարագոյր (†<sup>աւր</sup>)  
 քաշուած լինելով, էլ չենք կարողա-

ման տեսնել և խնամազ մեր թշուառու-  
 թիւնն, սրոյ վասն գիտութեան, ար-  
 չեամենէրի և քաղաքականութեան զար-  
 գացում և ծաղկելն մեր ոչխուշ չենք  
 համարում: Երջանիկ կենաց համե ա-  
 ուած չլինելով, երանութիւնամբ հա-  
 մարում այն օրն՝ որ առանց յեզոյ թիւն-  
 ամբ անցուցանում, և ազխառէ օրերն՝  
 լըյսամբ համարում Պատու ճոյճազած:

Մին օր մին ճերմակամերու ք ձեր  
 մարդ տեսի՝ որ իւր տղի մասին վարպե-  
 տու հետ կախէ էր տարման, և ասումք.  
 « Կարդալ գիտելն մարդոյս կենացն ա-  
 մենե ին մին օգուտ չունի. թող ալէս  
 շուկայ այսինքն բազար գնալ, կտրա-  
 կաւ մ այսինքն դա բանում նստի, ստ-  
 վորի երկու փող դասել և իւր օրական  
 հացն հանել: Մեր Հարքն առանց սյղ  
 անտանելի ծառայութեան մինչև խորին  
 ձերութիւն ապրեցան, և ես՝ փառք Աս-  
 Է

տուծոյ, ևս տարիտամ հասէլ առանց  
 դարդալ սավորելէ. յամէն օր հացս կե-  
 րէլամ, մին օր քաղցած քուն չեմ ելէլ.  
 Բաւականայ որ իմ որդիս ևս իմ հասակն  
 հասանի, մանք տայ Ատուծոյ, և ին-  
 ձանէ ևս շնորհակալ լինի, որ իւրն ուս-  
 մի անտանելի ծառայութենից և ու-  
 սումնարանի բանտից ազատեցի ։”

Այս խօսքն լսելէ՝ ապշած մնացի  
 սրա անմտութեան զերայ. որ ծերու-  
 թեան հասակն հասանելով, դեռ խեղճն  
 չէր իմացէլ գիտութեան սեզին յարգն.  
 Իմաստութեան և կատարելութեան տա-  
 րին էր մտել, մտզէրն ճարտակէլէր, եր-  
 եսի կաշին կուչ էր եկէլ, ոյլ ափսոս, որ  
 իւր գէմքի զերայ իմաստութեան լոյսն  
 ծագէլ չէր. Թշուտտականն կարծու մէր.  
 Թէ ինչքն անայն կարգու զբերլ չիմանալով  
 և գիտութեանց մասն չունենալով՝ այն  
 հացն էր աւտուտ, իսկ իմ օր գիտու-

թեան հեանէնայ՝ կարօտայ Տեման հա-  
 յի : Չկարողացաւ իմանալ այս եօթա-  
 նասուն տարեկան ծերն թէ ո՞վ որ ի-  
 մաստու թեան կսիրի՝ նորին անձն քա-  
 բու թեան մէջ կ'ապրի : Ատոնք կան որ  
 սորա նման՝ գերութիւն և անտանելի  
 ծառայութիւնան համարում ուսմանց  
 հեռակէն : և բանտան կարծում ուսման  
 և գիտութեանց դպրատուններն : և  
 դեռ չեն իմացել թէ գիտութեան ու-  
 սումն՝ ո՞չ թէ միայն մտաց : այլև մարմ-  
 նոյ ևս կառավարողի դէպ յերջանկու-  
 թիւն և կենաց բարօրութիւն : չեն ճա-  
 նաչում այն ճշմարտութիւնն՝ թէ Ե-  
 րօսի միջում մին ժամանակով յառաջ,  
 մարդիկ շատ սողքատ վիճակի մէջ էին  
 և աննշան : և ներկայ միայն ուսմամբ  
 հասան մեծութեան, և արժանապէս  
 պատիւ և գոյութիւն ան ստանան : Ե-  
 րօսիայ գիտուններն շատ քն՝ որոյ վե-

բայ բոլոր ազգք զարմացէլան, քաշ  
 ազգից և աղքատ մարդկանց խիզանանս  
 Իսկ մեր միջում՝ և թէ մինն ու զինայ  
 այլոց յորդորել զխոռ թխն և արհեստ-  
 նէր ստլորելէ, էնպէս մարդիկ կ'գտան-  
 մեն, որ նորա խօռքերն շլի ասու թխն  
 կ'համարեն և կան ևս՝ որ բոլորովին  
 անխելք և շիկ համարեն յորդորողին :  
 Ե՛կ այժմ արհեստի կարմիցն և ս  
 քնենք քիչ սէս մարդի ախարժ չի գո-  
 լէց երգոց միւնայն եղանակն միշտ լաել՝  
 նայնպէս ևս՝ դուցէ ճանճրալիս արևայ  
 իմ կրկնակի յիշածս խօսքն, թէ տակա-  
 վին մել՝ Ազգի մտաց աչքերն խախտան  
 և չեն կարողաման ընտրել լէմին ու վա-  
 տրն՝ և իւր շահն ու մեասան՝ Ասան գի-  
 մին օրինակ տանք բուրդ, կաննեքի, (Եր-  
 Երօրի լգան, Կենդի և Բել է շինման) բամբակ  
 և սքրշում, մեր երկրում աստատօրէն  
 դուսան գորման, բայց անպարժ և անսխ-

տանն. սակայն Երօփայ գործարաններն  
 տանելով՝ տեղն գործմանն և շինած  
 յետան գոլման կրկին մեզ, ամէն միւնն  
 շուրի, Բաւել, մախմախ և տեսակ տեսակ  
 կտաւների և արքշմեղէնի կերպարանք  
 մտելով: Եւ մեք մեզ հարկաւոր  
 ելածն, նոյն մեր աշխարհի բերքն  
 պարտաւորմանամք նորմէ առնել թանգ  
 դնով. որով մեզ վնասայ երման, Մի  
 թէ երկաթ, պղինձ և ուրիշ մետաղներ  
 մեր երկրի հանքերիցն դուս չեն գոլ-  
 ման. որ զէնքեր, թճամուղներ, և այլ  
 կերպ կերպ ամաններ շինվելով, յետ-  
 ան գոլման մեզ, և մեք ևս նոյնն գործ-  
 ամք ածում: Մի թէ ազնիւ կարմիր  
 որդն և տեսակ տեսակ թանգերն մեր  
 երկրիցն չեն տարածման բողոք աշխարհ,  
 և կրկին յետան գործման մեզ զանազան  
 թանգ ներկած: Էտտունց արեւոյ իմացիք միւս  
 այլ ամենայն բերք, քէրն և օր մեր Հայաստ.

սոսն աշխարհ քին սեսլհական պարզե-  
 նէրնան : Յ յս ամենայնն ևս ինչ պէս  
 որ ասացի, մեր անմատ թեան և ադի-  
 տու թեան համար՝ օտարնէրն մեր ձեռ-  
 նիցն թալանու ման եժան գնով, և նան-  
 ցանէ շինուածն նորմէ մեզ յետան դար-  
 ձուցանում. և մնացած շահն յինքան  
 առ ման տանում : Եւ այս անմտու թիւնն  
 մի թէ մեր ազգի մեծամեծ թշնամեաց  
 մինն չի. որ մեր ազխտու թեամբն ուրիշ-  
 նէրնան լցման, և մեր վնասվելուն մի ու-  
 նէրնան հարստաման :

Սակայն՝ ինչ կայ զարմանալէ. մի թէ  
 ձեռագործ արհեստնէրի մը ևս նոյն  
 մտաց կուրու թիւնն չի արեւման. վասն  
 զի՝ շատոնք շենտեաման և չեն խնաման  
 անական բանէրն, բնակու թեանց և  
 տնեղինաց հաստարանու թիւնք և ար-  
 գեղու թիւնքն, և շատոնք ևս կան՝ որ  
 իւրեանց ունեցածն Երօփացի վար-

սիւանէրի շինածնէրիցն վերադասում  
 են : Եւ ներկայ էնախ ժամանակ հա-  
 սած լինելով : որ Երօփ բոլոր արհեստ-  
 նէրի ծայրն հասածայ համարման ,  
 մերոնքն դեռ իւրեանց յառաջէն անար-  
 հեստութեան միջումն են մնանու Արդ՝  
 ինձ արեւմանայ՝ թէ հատկի աւելի մեծ  
 թշուառութիւն չկայ , եթէ չկարողա-  
 նամք հասկանալ ուսմի և արհեստի  
 մասին մեր ունեցած սրտիասու թիւնքն :  
 Բարարականութեան մասին ևս այսպի-  
 սի վիճակի մէջայ դասնման մեր Ազգն :  
 Բայց թղթիւ չափն ինձ չի թողման՝ որ  
 այս խնդրոյս վերայ ընդ երկար խօսեմ  
 մի ըստ մտղէ :

Արդ կտեսնես , ո՛վ ազգասէրդ , թիւ  
 միւնչե ինչ սահման վնասների միջ բերին  
 դձեցին մեզ՝ ամէն օրէ խառնութիւնք  
 և ժամանակի մարդկանց անուսումնաւ  
 սիրտ թիւնքն : Ժողովուրդ՝ որոյ սրտի

մէջ փառաց ցանկութիւնն սառելէ, ժո-  
 ցովորդ վախշուկ սիրտն կտորած և  
 անմտացեալ. ահա էստոնք են ժամա-  
 նակիս հանգամանքն :

Բ. Աղքատութեան արէագր :—Մին ցոր-  
 նի արտ տեսի անպտուղ, բոլոր ցորէն-  
 նէրի հասակն և չափսն մի և նոյն ին .  
 մին փոքր քամի փչելէն՝ դիրուր ին գոյ-  
 ման, կեռամանին, բարձրամանին և  
 դողմանին : Երբեմն ջուրն որ բարձրա-  
 մանէր՝ մտմանէր աւերումէր : և երբեմն  
 ևս վայրենի գաղաններ էին մաման փչա-  
 ցանու մ' որոյ վասն անշուք և տկար էր  
 մասան և ասղատի համար ևս բաւ տկան  
 չէր ելման : Ս. յս օրինակիս՝ ահա կնդ-  
 մանի մեր Ազգն սղքատութեան կոյ-  
 մանէ, որ հաղիւ կարողամանայ դիմա-  
 նալ զրկանքնէրին՝ որ չորեք կոյմից  
 կրու մայ : Թէ որ այս սղքատ ժողո-  
 վորդն հազիւ այ կարողաման իսր կա-

ըն որ պիտոյից հոգսն առել, ինչպէսայ  
կարող ձեռ բռնի ուրիշներին՝ դիտու-  
թիւնք և արհեստք յառաջացանելէ  
համար, վասն զի՝ այս բանին հարկա-  
ւորան շատ վարժարաններ, դպրա-  
տունք և կրթարանք: Մին աղքատ  
ժողովուրդ՝ ո՛չ թէ այլոց ձեռ բռնել,  
այլ յայլոցէ օգնականութեան կարօ-  
տութիւն ունի, քանզի աղքատն յինք  
առնողայ և ո՛չ տուօլ:

Երբ որ ազգասիրութեան ոգին մեր  
սրտի մէջ վառվելու լինի, կզարմա-  
նանք թէ ընդէր ողջնէլ միանգամայն  
չեն միաբանման յառաջադիմութեան  
հոգս առել, մի թէ անմիտ բան չի  
այս, բայց՝ պիտի մտածել որ աղքատ  
ժողովուրդն դռհութեամբ կ'համբերի  
կարօտութեան միջում, նորա սրտի փա-  
փագքն չափ և սահման կ'ունենան, և  
երբէք իւր աչքն անյուսալի բաների

չի գձեւէց: Ազգի յառաջադիմութեան  
 համար ունեցած սէրն՝ ոչ թէ միայն  
 իւր կարողութենիցն դուրս է, այլև  
 իւր մտքի հասողութենիցն ևս: Վասն  
 զի փողն՝ որ ամենայն բանի անխն է,  
 շատ կ'վախօցանի իւրն: Արդ՝ եթէ  
 համարենք թէ ազգաստութիւնն մեր  
 բոլոր Ազգի մէջ տարածվելոյ, և մեծ  
 մասն ևս կարօտան օգնականութեան,  
 յետոյ կարևայ թէ Ազգն ինքնին չի  
 կարող խղճութիւնն իւր վերնից գձել:  
 Ահա, այսպէս է ազգաստութեան խղ-  
 ճութիւնն, որ փոքր արգելք չի ուս-  
 մանց և արհեստների յառաջադիմու-  
 թեան և ծաղկելուն, որոյ վերայ կրկին  
 կխօսենք վերջի մասին միջումն:

Գ. Եղբարց միմեանցէ բաժանվելն և  
 Ներկայէս նոր աշխարհագիտաց ուղիոյ  
 հաշուին (ԽՒԷԲԻՆ) ականելով, մեր Ազգի  
 բազմութեան թիվն երեք չոք միլիոնից

յաւել չի լինելէց : Սյապէս ուրեմն  
 մեք երեք չոք միլիոնի չափ եղբարք  
 եմք՝ մի հօրէ ծնած, ընտանի, ազգական  
 և մին ճնողաց հարազատ որդիք . ո՞վ  
 երջանիկ եղբայրութիւն, ո՞վ քաղցր  
 յիշատակ . . . : Իրաւ է, եթէ ուրիշ  
 մեծամեծ ազգաց հետ քաղգատենք՝ մի  
 բան չի արեալէց , բայց փոքր ժողո-  
 վուրդ ևս չի . մանաւանդ որ եռանդոտ  
 և աշխատասէր բնութեամբն՝ շատ մե-  
 ծամեծ ազգերից ևս յաւել է . փասն զի  
 փոքրութեամբն՝ շատ մեծ մեծ գործք-  
 էր է գլուխ ասնում :

Երջանիկ հին ժամանակումն՝ այս  
 փոքրիկ հօտն ( ոչ խորի գուլէն ) մին հովուի  
 ( շօքանի ) գաւազանի տակ կ'ժողովէին ,  
 մինն միւսով կ'տարախայէն , միմեանց  
 վերայ գութք կ'ածին կսեբէին , մինն  
 միւսով կ'փառաւորէին , և մինն՝ եթէ  
 վշտանայր տխրութեան միջ ընկանէր ,

խակոյն բոլորի աղիքն կտրատվելով  
 սրտոցաւ կ' լինէին, բայց վերջի ժամա-  
 նակնէրումս՝ հովիւն վեր ընկաւ, և ոչ-  
 խարքն ևս ցրուեցան: Այս է ահա,  
 մեր Ազգի առաջին կործանումն: Եւ  
 թէպէտ մեր Ազգն 'ի բնէ զարմանալի  
 համբերութիւն ունի, սակայն իւր  
 համբերութիւնն որպէս թէ յազթեցաւ  
 արտաքին թշնամեաց սաստիկ տառա-  
 պանքիցն, վասն զի՝ երբ որ աշխարհա-  
 կործան այն հարուածքն մինն մնի յետ-  
 նայ վերային հասաման, երբ որ հայ-  
 բենի որմերի քանդվելոյ թնդալն մե-  
 րայնոց ահանջն էր հասաման, բոլոր  
 Հայերն սաստիկ երկիւղի մէջ ընկանելով,  
 վախմանին և սոսկալով կ' վախնէին:  
 Եւ որովհետեւ շատ ձիգ տեւց այն խղ-  
 ճալի տառապանքն՝ ամէն մարդ սավո-  
 րէց որ ինքն իւրն և իւր ընտանեաց մին  
 անդ ժողովել՝ ուրիշներէ վերայ հոգ<sup>ս</sup>

չունենալով : Եւ՝ ահա՛, այս կերպիւ  
 անկաւ, և ազգային ոգին մասն մասն  
 բաժանուեցաւ, և օտարածին և ուրիշ  
 լեզու խօսող առաջնորդութեամբ հա-  
 զարաւոր կերտարանք փոխուեցան ազ-  
 գային օրէնքն, բարքն և սովորութիւնն :  
 Էստից՝ մեր մէջ մտան ձեռոց և տնական  
 կարգաց փոփոխութիւնք, էստի՝ վար-  
 քի և լեզուի կործանումն, էստի՝ սառ-  
 նութիւն մտաւ մեր մէջ, էստից՝ ար-  
 համարանք, կռիւնք, միանգամայն ա-  
 սել՝ էստից ծագեցան անմիտքանու-  
 թիւնք և թշնամութիւնք, քաղաք՝ քա-  
 ղաքի հետ, դաս՝ դասի հետ, կողմն՝ կող-  
 մի հետ : Այս բաժանուելն փոքրիկ ժո-  
 ղովորդի համար փոքր հարուածք չեն :  
 Ահա՛, էստով կ'տեսնես որ՝ տեղա-  
 րէնքի հեռաւորութիւնն և հարազատ  
 եղբարց միմեանցէ բաժանուելն՝ այնքան  
 վնասակար չին կարող լինել մեր յա-

ուղանալոյն, որքան միմեանցէ սառե լն,  
 անձին շահն միայն ուղե լն, առանձին  
 միայնակ կեանքն և հասարակաց բարու-  
 թեան հոգս չառե լն :

Կան ևս ոմանք՝ որք աղգասիրու-  
 թեան փափագով վառած լինելով,  
 Հայազգի ժողովքոց թիւն մինչ տասն  
 կտասաներկու մլլիանի չափ կըջանանան  
 հասոցանել : Ս, յլ՝ սառ դու ինձ,  
 թէպէտե իրաւասէս այդ այդպէս լի-  
 նի, ինչ օգուտ եղբարց շատու թիւնն՝  
 թէ որ սիրոյ կասով կըբայրացած  
 չլինենք : Աղգակից՝ բայց մինն մի-  
 սից ջակված հեռի կացած եղբարքն  
 կ'ամանեն դեռի միջումեքած քարէրի՝  
 որք՝ յիրար կպած չլինելով, սրլնթաց  
 ջուրն կ'քաշի կ'տանի տառապանաց  
 ճովի մեջ, ուստի անհնար է աղասովի՝  
 բայց երբ կաւով (յեկով) մինն միւսի  
 հետ շաղաղած և կպած լինեն, մին

պիտի թուամբ և որով կ'դառնան ջրի սրլնթացութեան դէմ, այսինքն տառապանաց և երկարառակութեանց :

Մինչ այժմ շատ փորձեցինք թէ որքան վնասներ ծնան անմիաբանութեամբ, և որքան վնասներ ելան անտի՛ ուսմանց և արհեստների յառաջագիմութեան : Երօրացիք իւրեանք կ'վկայեն թէ իւրեանց մէջ ուսմանց և արհեստի յառաջանալոյ սխառճառնննչ այնքան Տէրութիւնք և թագաւորական գանձերն եղեն, որքան ազգակից եղբարց միաբան խորհրդակցութիւն և դործակցութիւնն : Ատան որոյ՝ մին խեղճ և յետ ընկած ուղղի, ամենեին օգուտ չի լինելէց՝ ամէն մարդի իւր անձնի շահն միայն մտածել և առանձին խորհրդներ, այլ միաբանութեան և հասարակութեան եռանդ է հարկաւոր :

Ահա՛ ինչպէս որ տեսանք, մեր  
 Ազգի յառաջադիմութեան գլխաւոր  
 արդելքներն երեք են, որոց վերայ  
 տեղս կարճ կերպով խօսեցանք. այս-  
 ինքն՝ ժամանակի հանդամանքներն,  
 աղքատութեան խղճութիւնն, և աղ-  
 գակից եղբարց միմեանցէ բաժանելն:  
 Աւանդ մեր թշուառութեանն . . .  
 երբ որ մինն անցեալ օրէր միտք բե-  
 րի, գալոյ ժամանակէ խղճութիւն-  
 ներն ևս գուցէ գուշակելով կ'որո-  
 մի: Սակայն՝ խելօք և կատարեալ  
 մարդի գործ չի այս, որ միայն իւր  
 յետ մնալն մտածի և յուսահատելով  
 տարակուսանաց մէջ մնայ: Թէ որ  
 մինն հիւանդ լինի և իւր ցաւերն  
 անբժշկելի համարելով տրտմի, հոգսի  
 մէջ ընկանի և մահի երկիւղից պաշա-  
 րած մնայ, 'ի զոր է բժշկների ջանքն,  
 տլած դեղարուներն ևս անօգուտ:

Գարձեալ՝ թէ որ մնի ոտ քարի կալի,  
 Երաւայ վայր ընկանելովն մին փոքր  
 Ժամանակ իւր ճանապարհիցն յետ կըն-  
 դանի, քայց՝ էստուր համար, իւր մըտ-  
 քում հաստատած ճանապարհիցն յետ  
 չի մնալէց: Աղէ՛, դու ևս՝ որ անու-  
 սու մնու թեան հողսի մեջաւ ընկէլ, մի  
 վախճնար արդելքնէրին քաջութեամբ  
 դէմ կալ և յաղթել: Անցեալն միտ  
 բերելով դու քեզ մի սպաներ, ոչ լուս-  
 արարէր ևս լինի:

Գուցէ ազգասէր եղբարք հարցանեն,  
 արդեօք որոք դեղ կայ այս տառապա-  
 նաց: Այո՛, կայ և շատ լաւն կայ,  
 որ յայանապէս երբորդ յողուածի մեջ  
 յատկացեալ կգնենք, և յուսամք մեր  
 Ազգասէրքն անհնարին բանք չեն հա-  
 մարելէց՝ սյլ հաւանեալան կհամարեն  
 մեր աստ թխնքն:

Մ Ա Ս Ն Գ .

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ



Ս. յսպէս ուրեմն երեք բան են , որ մինչ այժմ արգելք եղին Ս. զգիս գեղեցիկ յառաջադիմութեանն . այսինքն է՝ մտաց թմրութիւն , աղքատութիւն և եղբարց միմեանցէ բաժանուելն , ջուր և անօգուտ կլիներ երկբայական մտօք ուզենալ փորձել և Ս. զգի յառաջադիմութիւնն գլուխ տանել՝ սուանց սկզբիցն արմատախիլ ( ԽԷԽԻՆԷ ) առելոյ այս երեք արգելքնէն ուսման , արուեստից և քաղաքականութեան :

Սակայն՝ թէ որ մինն ընդդիմանալով ուզենայ ասել՝ թէ ներկայ ևս մեր Ս. զգի միջում փոքր յառաջադիմութիւն չի որ

արեմանայ, և թէ՛ առանց այդ արդեւ թե-  
 նէրն մէջ տեղիցն բառնալոյ ևս, կարելի  
 է որ ուսմունքն զարգանայ՝ դպրոցներ  
 և վարժարաններ շինելով: Ես ևս այդ  
 մտաց ընդունելու թիւն տալով՝ կ'ասեմ  
 թէ մարթ է այդ կերպ յառաջագիտու-  
 թեան այնքան յուսալ՝ որքան որ մին-  
 չեւ այժմ՝ երևեցաւ մեր միջում: Բայց  
 սատ մեր ասու թիւնն էնդուր վերայ է,  
 թէ՛ ինչպէս հնար է բոլոր ազգն միան-  
 դամայն բարեկրթել, և բարբի՛ն միան-  
 դամայն դէպ ՚ի դիտու թեան լոյսն սու-  
 նել: ահա, հատուր անհնար է հասանել  
 մեր բնական ծանր ընթացքովն, և էն ևս  
 մին քանի հաս դպրատուններով և  
 մին քանի վարժարաններով: Այսին զի՛  
 բոլոր ազգս միանդամայն յառաջ տանելէ  
 համար, հարկաւ որ է ամենայն քաղաք-  
 ների և գեղերի մէջ դպրոցներ ունենալ  
 կարգալ գրել սովորել, և սկզբնական

օգտակար ուսմանց . մեծ քաղաքների  
միջումն ևս՝ բնական և բանասիրական  
վարժատունք, գեղեցիկ արհեստների  
մարդարաններ, արհեստի տեղարէնք,  
սպառարատունք, դր. քատունք, բնական  
արտամութեան և վարպետաշէն ձեռա-  
գործների թանգարանք (Գ-շէԵԾ), և այլ  
ուրիշ ինչ որ էստուր կ'վերաբերեն :

Արդ՝ ո՞վայ կարող այսքան մին մեծ կա-  
րօտութիւն լցուցանել . միթէ հնար է  
այս ընթացքով որ մինչ օրս ընթացե-  
լանք, հասանել այս բանին . միթէ մին  
քանի բարերար մարդիկ բաւական են  
բոլոր մին ազգ լուսաւորելէ մին քանի  
դպրատունք շինել տալով . ո՞չ թէ մին  
և երկքի, այլ և ո՞չ տասն մարդի բան է  
այդ : Չեմ տեսում թէ մին աղօտ փոքր  
լոյս շին կարող ծագել, այլ իւրեանց  
մտքի յառաջադրութիւնն շին կարող  
զլուխ տանել, և մեծ մեծ փոփոխու-

թիւնք առել ազգի մէջ, թէպէտ և ան-  
 հատ գանձք ու զինան ծախել այս բա-  
 նի համար: Վասն զի՝ մեծամեծ գործ-  
 քէքի ձեռ տալոյ ժամանակումն, մին  
 պատիկ դժուարութիւն ևս թէ գուս  
 գոյ՝ չափսից դուս մեծ մեծ հակայնէր  
 կ' թուան: Եւ թէպէտ որքան որ հեշտ  
 լինի էտոնց մնին կամ երկքին յաղթել,  
 այլ շատ անգամ կլինի՝ որ երորդումն  
 կ' յաղթուի այն բարերարն, ձեռ վեր  
 կուտու գործքիցն, որով և իւր մտքում  
 դրած գեղեցիկ առաջագրութիւնն ան-  
 խննտամ կ' մնայ և անկատար:

Վերոյիշեալս մեծ դժուարութեանց  
 առաջինն՝ է փողի պակասութիւնն,  
 կամ պարզն ասենք աղքատութիւնն,  
 վասն զի մին բարերար մարդ որ ամե-  
 նայն ինչ առատ ունենայ՝ կամելով  
 բոլոր ազգի մէջ տարածել իւր բարիքն,  
 առատութեամբ կ' բաշխէ իւր ունեցած

Հարսառ թիւնն աղգակից եղբայրնէ ընեն ,  
 նոցա Համար դպրոցներ , աղքատա-  
 նոցներ , Հիւանդանոցներ և այլն շի-  
 նել տալով . այլ որովհետև մեր երկրի  
 մէջ ամէն բաների կերտարանքն և ամէն  
 մնի բողբոսն՝ քան զլուսինն շուտով  
 կ'փոխուի , ուստի եթէ նոյն բարերարի  
 վիճակն ևս փոխուելու լինի՝ էլ կարու-  
 դու թիւն չունենալով նոյն շինուածքն  
 Հաստատ պահելէ , միմին կամ՝ բոլորն՝ ի  
 միասին կ'խափանուեն կ'մնան : Եւ այս  
 ասու թիւնս փուչ ասու թիւն չՀամար-  
 քես , այլ յայտնի ճշմարտու թիւն . որոյ  
 փորձն առէլամք մեք , և օրինակներն  
 ևս տեսէլանք մեր ժամանակումն :

Այլ Համարենք թէ բողբոսն աջո-  
 զակ ընթանալով տեի մինչև վաղճանն .  
 այլ աստ ինձ , քանի՞ հոգի կան մեր Ս.Գ-  
 գի միջումն , որ՝ այսպիսի մեծամեծ բա-  
 րերարու թիւանց ձեռ տալով , կարողու-

նան տե ել շատն՝ չորք կամ հինգ հո-  
 գիք : Բայց տես դու՝ որ մեր Ազգն ոչ  
 թէ հեղի կամ վեցի, այլ հազարաւոր  
 դպրոցներն, վարժատանց և արհես-  
 տանոցայ հարկաւորութիւն ունի .  
 քանզի՝ մին ազգի համար հինգ կամ  
 վեց կրթարաններն այնպէս են, որպէս  
 մին կաթ անձրև՝ մին մեծ ցամաք դաշ-  
 տի, կամ որպէս մին ճրագի լոյս՝ բոլոր  
 քաղաքի : Թո՛ղ զայս՝ գործքի անյաջո-  
 ղութիւնն, անպտուղ և ունայն խարջն,  
 չափսից դուս Քի.քր և աշխատութիւնն  
 և յանդիման եկած մին պատիկ դժուա-  
 րութիւնն, շատ բաւականան որոք մին  
 բարերարի պարտաւորել որ թողու և  
 ձեռ վեռու իւր արարած բարերարու-  
 թենիցն և անպտուղ թողու իւր գործն :  
 Այս բոլոր սասճներկցս լաւ յայտնի  
 կ'արևայ, թէ՛ ազգի յառաջանալոյ  
 համար, անհոար է այն կանոններով

վարուել՝ որով մինչ օրս վարուեցանք,  
 և անօգուտ ջանք և զուր վաստակ կլինի՝  
 թէ որ կրկին ունայն յուսով մեք մեզ  
 խաբինք և նոյնով բաւ ականանանք :

Վսանորոյ՝ մին այլ Հնարք գործ  
 դնենք Ազգին յառաջացանելոյ համար,  
 և Էնպէս մին Հնարք՝ որ նախ աղքա-  
 տու թիւնն և եղբարց բաժանուելն կա-  
 ըող չլինեն արգելք դառնալ մեր Ազգի  
 ընթացքին, և երկրորդ՝ սիրտ բռնեն  
 այնու մերայինքն ուսման և արհեստ՝ ց  
 ջանք անելոյ : Եւ ինչ են այս Հնարքն

Երօվայ քաղաքական կառավարու-  
 թեան մէջ այս կերպ մին օրէնք կայ,  
 որ՝ քաղաքի կառավարիչն մեծից ու  
 պատկից ամէն մեի վիճակի համեմատ  
 մին հարկ է յինք առման, և նոյն դո-  
 մարն վերատին ժողովրդի համար մին  
 բանում խառջումայ, դպրատունք,  
 արհեստանցք, հրապարակք և այն

շինել տալով. կարճ խօսքով ասեմ,  
 ժողովրդից յինք առած փողն՝ կրկին  
 նանցան յերոսյ տալման. մին փոքր  
 իքովնում՝ նանցան զբկումայ, բայց  
 հասարակաց մին շինուածք շինել տա-  
 լով մինն մուսի հետ կապումայ. էս-  
 տուր համար իբրև եղբայրան համար-  
 ման քաղաքացին՝ քաղաքացու հետ,  
 գեղցին՝ գեղցու հետ, և հասարակաց  
 շինուածքն սլաշտպանուման իւրեանց  
 ստացուածքի պէս. վասն զի՝ թէպէտ  
 նոյն շինուածքի վերայ իւրեանք մին  
 փոքր փողան խառջէլ, բայց ամենե-  
 քեան ևս հաւասարապէս տերան:

Նոքա՝ որք ազամայ և ՚ի հարկէ  
 ստխակալ, մեծամեծ շինութիւնք ան  
 առում տշխարհիս մէջ, ինչ կերնի թէ  
 որ մեք՝ հայրենասիրութենից միայն  
 յորդորեալ, նոյն հնարքն մեր օգտի  
 համար դործ ածենք, և մեր երկրի

շինու թեան և ճաղկելու վերայ բա-  
նացանենք :

Արդ՝ իմ կարծիքն էսայ, թէ մեր  
Ս.զգն ընկերութեամբ միայն կարող  
կլինի յառաջանալ ուսմի, արհեստի և  
քաղաքականութեան մէջ : Վասն զի  
ընկերութիւնն մեծ զօրութիւն և ուժ  
ունի . ընկերութեամբ միայն հնար  
է բաժանուած և ցրուած ժողովրդի  
նարմէ կանգնացանել, ընկերութեամբ  
կ'մոռացուի ժողովրդի տառապանք-  
նէքն, ընկերութեամբ միայն կարելի է  
թումբ ազել : Գնել թշուառութեանց  
յարձակման դէմ, և ազխոտութիւնն՝ որ  
մարդկանց և ժողովրդոց կըջանկու-  
թեան թշնամի է, շատ անձինքնէրով  
և ընկերական կապով միայն կ'յայթ-  
ուի . գխոտութիւնք և արհեստանէր ընկե-  
րութեամբ միայն կ'ճաղկին մեր երկրի  
միջում, և ընկերութեամբ միայն մեր

Հնացած և աւերակ դարձած աշխարհ-  
քի շինութեան Հնարքն կգտանալի :  
Ասան զի ընկերութիւն ասելն՝ միաբա-  
նութիւն ասել է , և միաբանականն՝  
որքան որ ազար անգոր լինի , մին ո-  
գուց զօրաւոր կլինի : Ընկերական միա-  
բանութեամբ կ'վերանայ բոլոր դժուար-  
ութեանց արգելքներն , սրոց Համար  
բազմիցս խօսեցանք : Ասան զի նախ՝  
ընկերութեան գիտումն մին լինելով ,  
նչ մնի մեռնելովն և նչ միւսի յուսա-  
Հասեալ յետ քաշուելովն առաջագը-  
րած խորհրդներն կ'խափանուեն , և  
երկրորդ՝ այս դարձանալի միաբանու-  
թեամբ ամէն ձեռ թէ և ազար լինի ,  
կարող է ազգի յառաջագիմութեանն  
օգնական լինել :

Օրինակի Համար գներնք թէ՛ ար-  
հեստական մին դպրոց շինելոյ Համար  
Հարիւր Հազար սուփիք Հարկաւոր

լինեն . թէ որ մին հողի այս բնու իւր  
 վերայ առնելոյ լինի , շատ մեծ վնաս  
 կ'կրի . և շատ անգամ կ'լինի ' որ խարջի  
 ծանրութեան տակու մն կ'մնայ . իսկ  
 թէ որ տասն հողի տասն տասն հազար  
 սուփիք վեր դոն , առաւել աջողակ  
 կ'լինի շինութեան համար . վասն զի  
 ոչ ոք դուս չի դուլէց որ ուղենայ կամ  
 կարող լինի մին լաք սուփիք խարջել ,  
 առանց մեծ վնաս կրելոյ . բայց տասն  
 հազարն՝ շատոնք կարող կ'լինեն առ :  
 Երդ՝ թէ որ ընկերներն քսան հողի  
 լինեն , հինգ հազարով կ'թամամիլի  
 գործն . դարձեալ թէ որ հարիւր հո-  
 գի լինեն ընկերքն , միայն հազար սու-  
 փով կարեւոր կ'լինի նոյն մարդարանն  
 ունենալ : Էստուր պէս են բոլոր այն  
 գործքերն՝ որ ժողովպոց աչքին ծանր  
 ան թովման , որոց յաջողիւնն հեշտ է  
 և առանց աշխատանքի :

Էստով յայտնի կ'արեայ, որ ազգի յառաջանալոյ համար ոչ թէ միայն շատ հարուստեքն, այլ և միջակ աստիճանի մարդիկն ևս կարողան օգնել : Որքան դեղեցիկ ու բախտ թիւն է տեսնել չքաւոր աղքատեքին, որք միաբանուելով և ամէն մինն՝ մի մին կամ երկու փող վեր դնելով, մին այրի կրնկայ ասլբուստի հոգս են առում, որ իւրեկեցից աւելի աղքատ էր, և հիւանդ անձամբ չէր կարողաման հոգալ իւր և իւր խիզանի կերակուրն : Թէ որ մուրացկան աղքատեքն այս բանս կարողան աւել, մի թէ չստիաւոր փող ունեցողեքն չեն կարող միաբանուել և ազգին ձեռ բանել նեղութեան միջում : յորոյ միջ անկեալ լինելով, իւր զաւակաց օգնութեանն կ'կարօտի :

Չարմամանանք Նեկլիղի և Ֆրանսարդի հսկայի նման քայլելով յառաջ

դեպքին քաղաքականութեան և ար-  
 հեսանելի միջ, վասն զի նոցին հրաշա-  
 լի և շախախտ դուս մեծագործ շինուած  
 ներն՝ սրոյ վերայ ներկայէս մարդիկ-  
 ներն զմայլմանն, քաղաքացւոց ըն-  
 կերու թեամբնան գլուխ դնաման : Ար-  
 սէս Տէմս գեախ տակի ճանապարհն,  
 որ ներկայէս հրաշալեաց միննայ հա-  
 մարման, ընկերու թեամբ գլուխ դնայ,  
 երկաթէ ճանապարհներն, «էլ «օր,  
 շոգենաւելի նաւարկու թեանց, շահա-  
 վաճառ փոխութեանքնելի, և ամէն տե-  
 սակ բնական և արհեստական գիտու-  
 թեանց և տարագրու թեանց օրէց օր  
 շատանալն, ընկերու թեամբ միայն յա-  
 աջ ան դոլման, և ընկերու թեամբ մի-  
 այն կ'յաջողին : մին խօսքով տեսմ  
 մարան ընկերու թիւնն բոլոր Երօյի  
 այլ կերպարան փոխեցին : Եւ ընկե-  
 րու թեանց սրամաստա՝ սյառ հեանն

եկող ազգէրն շատ զարմացած կ'մնան  
 ներկայէս մարդկանց մեծագործու-  
 թեանց վերայ :

Երանել մեր Ազգին որ Երօփացոց  
 լուսաւորեալ ժամանակն միջումն իւր  
 մտաց աչքէրն բացմանն իմաստու-  
 թեան և գիտութեան լոյսն տեսնելոյ .  
 երանել կասեմ նմա , թէ որ հասկանաց  
 այս յաջողակ ժամանակն իւր օգտին  
 բան տալ : Աւան մեր կործանմանն  
 այլ ճար չկայ վերանորոգութեան ,  
 բաց ազգայնոց միարան ընկերութենէն,  
 որով մինն միւսի հետ կգրայրանա-  
 լով աննախանձ աչքով քաղաք քաղա-  
 քի հետ , կարող կլինեն աղքատու-  
 թեան թշուառութեանց յառէջքն  
 բռնել : Հայոց առէն աւերող և նոցա  
 ոխերիմ թշնամին , ազխառ թշւենն է  
 ելէլ մինչև օրս , և այս քարասիրտ բռ-  
 նակալն՝ անհամար տառապանքնէրով :

մեզ հազար անգամ մահուան դուռն  
 հասացրէց, այսպիսի թշնամունս որ մեր  
 աշխարհքի միջումն բունայ շինել և  
 արմատացել, այլ ճար չկայ դուս ա-  
 սերոյ՝ բայց ՚ի միաբանական ընկերու-  
 թենէն :

Մին բան կայ՝ որ գուցէ մերայնոց  
 ձեռ մկեռուլ տայ այսպիսի հարկաւոր  
 դեղ ու ճար առել սկսելոյ, էս ամ ու-  
 գում ասել, որ ամէն ազգի միջ առհա-  
 սարակ մին օրէնք ունեն որ բնաւ կա-  
 բելի չի աւերվի, այսինքն՝ այն բանն  
 որ սովորութիւն չի ելել, չի կարող  
 ժողովուրդն հեշտութեամբ յիւր օ-  
 գուս բան տալ, և որովհետև ժողովու-  
 ղի օրէնքն անխախտելի է, սւասի  
 այս բանիս համար մեր ժողովրդոց  
 հարկ չի մեղադրել՝ եթէ տակաւին  
 թուլութիւն առնն հարկաւոր գործոց  
 ձեռ տալ, լաւ խմանալով՝ որ սորա

պատճառն չուզելն չէ, այլ անգխառ-  
 թիւնն, թմբութիւնն և վախկու-  
 թիւնն՝ զորս սկզբի և մեծ արգելքնէր-  
 ան ասացինք : Արդ՝ այս դժուարու-  
 թիւնն միայն ազգասէրնէրնան կարող  
 միջից բաճնալ, և ինչպէս. իւրեանք  
 ինքնին օրինակ տալով և միաբանական  
 սիրով միմեանց հետ կապուելով, նոր  
 նոր ընկերութիւնք հաստատելով՝ թէ  
 ուսումնական և թէ արուեստական :  
 Ուրախանք տեսնել այսպիսի սիրով կա-  
 պած ընկերութեան օգտաբեր օրինակն՝  
 ՍԻՒՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ  
 Զմիւսնիա քաղաքի մէջ հաստատուել է :  
 որոյ ուսումնական մասին տուած մեծա-  
 մեծ բարեաց ակնկալութիւնն՝ որպէս  
 թէ արդէն կատարուելայ, և արդիւ-  
 նաւոր սրտուղ ևս տուել. որով և կըն-  
 ծայեմք զայն՝ իբրև բարի և օգտակար  
 օրինակ մերայնոց :

Ս. 11 ըստ իմ կարծեաց, ողջից յառաջ  
 Հարկաւոր է մին վարձատրական ընկե-  
 րութիւն հաստատել, ուսմանց՝ ար-  
 հետոնէրի՝ օգտակար վարպետու-  
 թեանց՝ նկարչութեան և երկրագոր-  
 ծութեան մէջ յառաջացողներին վարձք  
 և ընծայ տալ: Ս. 12 ընկերութիւնն՝  
 թող ստաջարկի ազգին պիտանի գըր-  
 քէր ևս յօրինել պայմանեալ ժամա-  
 նակաւ. յսրոց արժանաւորներին ևս  
 վարձատրել: Թող պարզ և խոստանայ  
 նոցա՝ որք Երօփացւոց արհեստ մեր  
 երկիրն մտցնեն, և նորա՝ որ վարպե-  
 տութեան մասին Երօփացւոց հետ հա-  
 ւասար գտանալին, նանցան ևս պատ-  
 ուի մրցանակներ տայ, որոց անուանքն  
 ևս օրագրէրի միջոցաւ Հարկաւորոց  
 հռչակել:

Վասն զի՝ ժողովուրդն տղայամիտ  
 լինելով, փառքից աւելի՝ շահի կ'ցան-

կայ, և դժուարութիւնք ոչինչ կհա-  
 մարի՝ վարձի ակնկալութեամբ, որք  
 կ'քաջալերեն իւրն՝ փոյթ տանել  
 ուսման և արհեստների յառաջանա-  
 լոյ: Ս, յս ասութեանս ճշմարտութե-  
 թիւնն էրօփայ մէջ յայտնի կ'արեայ,  
 վասն զի այն ազգերն՝ որ արուեստ-  
 ների և գիտութեանց մէջ յառաջա-  
 դէմ լինողանուն կ'վարձատրեն և  
 պարգև և փառք կ'խոստանան, նոցին  
 ժողովուրդն ուսեալ մարդիկան և  
 մաքերանին սուր, և միշտ նորանոր  
 օգտակար գիտութեանց յերանայան,  
 էտուր հակառակն կարեայ այն ազ-  
 գաց մէջ՝ ուր որ պարգևներն փոքրան  
 և փոքր անգամ խոստացեալ կ'լինեն,  
 Իտալացիք, Սպանիացիք, և այլք բո-  
 ղոքուման՝ թէ Ինգլիզի, Ֆրանսիզի  
 և Գերմանացւոց պէս վարձ չեն գը-  
 տաման, որ պատճառայ դաման իւ-

րեանց յետ մնալոյն :

Արդ թէ որ նոքա էսպէս բողոք բառնան, մեք ինչ պիտի առննք : Մեծ և պատիկ լու տեղեական, որ մինչ օրս մեր ազգի մէջ ևս անուանի մարդիկ գտանալելան երևելի բաների միջում, և իւրեանց պատուական արուեստովն և ձեռնի բարակ գործքերովն զարմացրելան Երօխացւոց ևս : բայց մեզնից ո՞վ արդեօք մին վարձքայ ամէլ նոցին վաստակոց փոխարէն, կամ ո՞վ արժանապէս սրտիւ տուեց, ո՞վ մին քաղցր երեսնչանց տուեց, ո՞վ յորդոր և քաջալերութիւն տուեց, ո՞վ օգնական և յուսադիր եղև : Կայ մին որ նանցան իւր պաշտպանութեան ներքոյ առած լինի, և նանցան հոգան քաջելով մտիթարած : Կայ մին որ այսպիսի նահատակաց ճակատի քրտունքն սրբէլ լինի, որք ՚ի սէր ազգի և հայրե-

'նեաց աշխատութեան միջում' դժուար  
 րութեանցան հանդիարման : Որք' նմին  
 պաշտպան կալով , անթիւ նեղութիւնք  
 ան կրում , որք' առանց մնի օգնակա-  
 'նութեան' պէտպէս վշտէր , զզուանք ,  
 հալածանք և մահան կրում համբերու-  
 թեամբ : Կսոյ մին' որ այսպիսի նահա-  
 տակաց յիշատակն' գոնէ մեռնելէն յետ ,  
 արձանագրութեամբ անմահացրած լի-  
 նի : Աւայ , էստոնց հակառակնանք  
 տեսման . . . : Ուրեմն ինչ . մին կողմից  
 դէմ' եկած արգելքներ , միւս կողմից  
 սիրտ կոտորել . ինչպէ՞ս պիտի յորդորվի  
 մեր Ազգն յառաջագիտութեան փոյթ  
 ունենալ :

Այս Ազգն երբեմն կ'ամանէր մին  
 սրբնթաց կառքի (գրքի) , որ փառքի  
 ճանապարհի վերէն հեշտ կերպում  
 վազ կ'տէր . իսկ այժմ , ափսոս , կառքի  
 չարխտէրն , ցիսի մէջան մխրվել , և ան-

տէր և անշարժ մնացէլայ ճանապարհի վերայ : Ո՛վ տրտմալի պատկեր , սվցաւալի պատահար . . . ողորմեցէք սվբարեկամք , օգնեցէք ազգասէրք , որ յառաջ դանքաջ մարդկներն , ձեռներն գծեն զօրաւորներն , յիստակ ճանապարհի վերայ հանել դնել այն՝ որ դժուար ճանապարհների մէջ տրգելվէլ է : Ս. յս է ժամադրութեան տեղն , այս է աջողակ օրն , հապան դուս գոն ազգասէրներն փառաց ասպարէզն (Ֆէշտն) . էլ ժամանակ չի օթախի դուշումն նստած՝ միայն ազգասիրութեան անուամբն պարծիլ . ազգասէր լինողն՝ թո՛ղ երևայ աշխարհի , թո՛ղ յորդորի , սիրա տայ , ողջին կանչի մին տեղ միաբանութեամբ ժողովիլ , եղբայրաբար կապուիլ , և բոլոր ունեցած ջանքն դուս հանել՝ ուսում , արուեստ և քաղաքականութիւն ծաղկեցանել և

յառաջ տանելոյ Համար : Երանի Ող-  
գին , երանեալ է այժմ և երանելի  
եղիցի յաւիտեան : Ամէն :

ՎԵՐԶ



Յ Ո Ր Դ Ո Ր Ա Կ

Ահա մեք մեր պարտականութենից պրծանք, «Ազգային Յառաջադիմութեան ճառն» հրատարակեալ վերջ տալով. և յուսամք որ մեր Պատուելի ընթերցողքն ևս իւրեանց պարտականութիւնն կատարել լինին, գլխէ 'ի գլուխ կարգալով: Սակայն հարկաւոր համարիմք այս կարճ համառօտութիւնն ևս գրել. առ 'ի բարւոք միտ առնելոյ զնոյն գրութիւնն և անջինջ տպաւորելոյ ձեր մտքումն:

Յառաջադիմութեան համար՝ ճառողն նախ հարկաւոր այ համարում Ազգասիրութիւն. որոյ կերպն ևս ցուցանումայ, պիտի Ազգային սրտամութեանց ծանօթութեամբ լինի: Եւ այս ստութիւնն ընդունելի այ ելէլ ամենայն Ազգաց յամենայն դարս. վասնորով

անհարկ համարիսք կրկնել 'աստ թէ  
 ամենայն Ազգք շահաման ան նախ  
 իւրեանց Ազգի պատմութիւնն տպա-  
 ւորել իւրեանց մանկանց սրտումն ,  
 ասրա այլոց Ազգաց : Քանզի ինչ շահ  
 կլինի մարդոյ՝ խմանալ այլոց տան ինչ  
 կայ, առանց ծանօթ լինելոյ իւր տան  
 միջի եղելոցն : Թողեալ այս, Ազգային  
 պատմութեամբ մանկանց մտք կլու-  
 սաւորվի . կ'խմանան այս ոք անձն ինչ  
 բարի բաներայ արարել, կամ միւսն՝  
 ինչպէս իւր արիւնն վեր այածել զտան  
 իւր Ազգի սրտատպանութեան . իւր Ազգի  
 վառքն կտպաւորվի իւր սրտումն ,  
 կ'սիրի և կ'ջանայ իւր ազնիւ Ազգի  
 օրինակին հետեւելով՝ բարի առնել և  
 ինքն . որոյ նման թէ բազումք զուրս  
 դոն՝ ուրբան օգուտ կ'ծնանի, զնք ինք-  
 նին մտածեցէք : Եւ մի և 'այնպէս՝  
 վատ, ինքնահաւան և դատաճան տեճնի

պատմու թեամբ կ'սմանայ որքան փաս-  
այ ելէլ իւր Հայրենեայն և իւր Ազգին •  
որով իւր սիրան կցաւի և կ'սորչի  
նոյնպիսի ախտից •

Երկրորդ՝ հարկաւոր այ քննահասանա-  
ւեան վնասակար ախտն բառնալ 'ի մի-  
ջոյ • Ինքնահաւանու թիւնն վնասա-  
կար ախտ չէ, այլ հարկաւոր է մար-  
դոյ՝ թէ չափսին լինի • քանզի թէ մարդ  
ինքնահաւանուի ինն չունենայ, իւր  
արժանաւորու թիւնն չի ճանաչել • որով  
իւր յարգն կ'կորցանի • Վասնորոյ՝ չա-  
փաւոր ինքնահաւանու թիւնն չէ որ  
վնասակար այ, այլ չափսից դժբան-  
քանզի՝ յայնժամ մոլի ախտ այ դառ-  
ման և պատճառ կործանման • Չկայ  
որոք անձն՝ որ ինքնահաւանու թիւն  
չունենայ • Տղերդն՝ որքան որ տգեղ լի-  
նի • բաղաճայնն՝ բաղաճայն և տգէտն՝  
տգէտ • սակայն կ'տեսնես որ՝ տգէտի

ձեռն մին գրութիւն կամ գիրք անկա-  
 նելէն, խակոյն կ'վազի սղալութիւն գտա-  
 նել. թէ ոչինչ չգտանի՝ կուզի գոնէ մին  
 տառասղալութիւն գտանի, ցոյց տայ  
 որ ինքն բան այ հասկաման: Նոյնպէս և  
 բաղաձայնն՝ կտեսնես սյնքան հաւան  
 այ իւր ձայնին, որ եղանակիւ է ժամա-  
 նակում գլուխն ևս կ'շարժէ. և տգեղն՝  
 որքան որ տգեղ լինի, քան զգեղեցկին  
 աւելի հայելին կ'ականի:

Ինչ են այսօքիկ թէ ոչ յայտնին շան,  
 որ ամենայն ոք ինքնահաւանութիւն  
 ունի: Վասն որոյ՝ միայն սյն ինքնա-  
 հաւանութիւնն այ արհամարհելի, որ-  
 չափաւոյ դուս լինի: Որպէս թէ մինն  
 իւր խելքին և կարողութեանն հաւանի,  
 և կարծի թէ իւր պէս խելօք և կարող  
 ոչ ոք չկայ: Կարելի այ որոք անձն  
 անսղալ լինի: Բայց թէ այսպիսի մար-  
 դոյ իւր սղալութիւնն ցուցանես, չի

ընդունելէց՝ կուզի իւր սղալ կարծիքն  
պաշտպանել, քանզի զմայլեալ է իւր  
խելքի վերայ :

Ուրեմն՝ ի՞նչ կ'զոյանայ. այս միայն՝  
որ ոչոք ևս սոյն իւր սղալ կարծիքն չի  
ընդունել : Յորմէ կզոյանայ խռովու-  
թիւն, նախանձ և հակառակու թիւն .  
որ երեխէքն ևս գիտեն թէ՛ նախանձ և  
հակառակու թիւն խռովեցողին զնոքաւորութիւնս :  
Թէ այսպիսի ինքնահաւանութիւն  
թագաւորութիւն անգամ կ'կործանի,  
ուրեմն մասնաւոր երկիր՝ կամ մին  
քաղաք՝ և կամ մին հասարակութիւն  
ի՞նչ պիտի դիմանան :

Երորդ՝ Հայոց լեզուն հարկաւոր այ  
վասն Ազգի պահպանութեան : — Ս. յս  
մասին այլ տեղում ևս կխօսեմք. վասն  
որոյ աստ այսքան ասեմք որ՝ իրաւա-  
պէս և ճշմարտապէս մին Ազգի ազգու-  
թեան նշանն իւր լեզուն է : Խնդրեմ

Տննդոց թ Ս Գ լուխ համար 1 եյ Տ լիբա  
 հասնու լինէք : 'ի սկզբանէ ամենայն  
 երկիր էր լեզու մի, զկնի խառնակու  
 թեան՝ լեզու և բարբառն բազմոցաւ :  
 և որքան ոգիք որ մի և նոյն լեզուն ին  
 խօսման՝ բաժանուեցան 'ի միւսոց և  
 եղին յատկացեալ Ազգ, զոր օրինակ  
 Հայ, Ինկլիզ, Բանգալցի :

Ուրեմն՝ հարկաւոր այ Հայոց, Ինկ-  
 լիզի, և Բանգալցու խակ լեզուքն, որ  
 ուլ յատկացեալ մնան նոյն Ազգերն :  
 Թէ որոք մին լեզու կորնի, ուրեմն  
 նոյն Ազգն ևս կորաւ : Եւ ի՛նչպէս սլու  
 աի կորնի, սցսպէս որ՝ թէ որոք Ազգ  
 միւս Ազգի լեզուն նախադասի քան զիւրն,  
 իւրն կ'իծալու միւսինն գործ կածի : Իւր  
 սերունդքն իւրեանց ճնողացէ սուրբե  
 լով՝ ոչ թէ միայն 'նախադասէն այլոցն,  
 այլ և իւրեանցն 'տրհամարէն, և այս  
 արհամարհու թեամբ Ազգ այլն ամենայն

սովորու թիւնք ևս ի՛արհամարհին • որով  
միւս սիրան որ դուս գոյ՝ կխռդուի ընդ  
այն Ազգի , որոյ լեզուն իւր նախնիքն  
նախարարելան :

Թէ մեր մտօք մին անց կանք ան-  
ցելոց մէջ , շուտ կտեսնենք աստ թեանս  
ճշմարտութիւնն : Ի՞նչ ելան մօտիկ  
քաղաքների մեր Ազգի բազմութիւնքն •  
ինչ կոյ այժմ՝ ՚ի Սուրաթ , բայ ՚ի գե-  
րեզմանաստունն , առ ՚ի վկայել թէ  
լի է ելէլ երբեմն մեր Ազգի բազմու-  
թեամբ : Ա՛ւր կն 40 հազար տուն շայ-  
երն , որ ըստ Չահկեցւոյն գնացել բնա-  
կել ան Ա. Ե. հացւոց Պօլսն Գաւառոյ միջում •  
և որք փոքր միջոցում այնքան բազմա-  
ցել ան , որ երկիւղ ան դձել Պօլանդաց-  
ւոց սիրան : Արովհետև արհամարհե-  
լան իւրեանց Ազգային լեզուն , Ազգային  
սովորութիւնքն , և Ազգային հաւասան ,  
վասն որոյ այնքան բազմութիւնն կո-

րէլայ ոչնչացէլայ : Ուրեմն սուլաւ սլարզ  
 արեման այ, շատ հարկաւոր այ լեզուն  
 վասն սլահպանու թեան Ազգութեան :  
 Այամ լաւ տեղեակ լինելով մեր խմաս-  
 տուն նահապեան Արամ, հրաման էր  
 տուէլ իւր տիրած երկրներէ սյլազգ  
 ժողովուրդքն իւրեանց լեզուն թողան  
 և Հայերէն խօսեն : որով 'ի հարկէ իւ-  
 րեանց լեզուն մոռանալով, իւրեանց  
 ամենայն սովորութիւնքն ևս կ'իտրցա-  
 նին և կ'Հայանին, որպէս և եղին : Սոյն  
 այս հնարքն և Շապուհ Թադաւորն  
 Պարսից 380 ամի ջանացաւ՝ ձեռամբ ա-  
 նօրէն ուրացելոյն Սեհրուժանայ, գործ  
 դնել ընդդէմ մեզ : այրել տալով մեր  
 գրքերն և հրաման տալով միայն զգիր  
 և զլեզու Պարսից ուսանել, որով հնա-  
 րէր մեզ Պարսի փոխել : Այլ՝ ոչ սորա  
 և ոչ Յազկիրաի ամենայն հնարք և  
 ոյժն կարողացան մեր նախնի քաջէ-

բին յաղթել : Ո՛չ սուր և ո՛չ հուր երկե-  
ցուսցեն զմեզ՝ լատ ճարտարաբանն  
Եղիշէի , է մեր քաջազանց աներկիւղ  
պատասխանն առ Յազկերտ :

Ծննդոց նոյն Գլուխ համար Տնկատե-  
լի է որ լիզուն խառնակելով , դադա-  
րեցին 'ի շինելոյ զքաղաքն և զաշտա-  
րակն : Որ շատ յարմարութիւն ունի  
ներկայէս մեր վիճակին : Քանզի՝ չո-  
րէք կողմից աշխարհի դանգատ ամբ  
լուծմ' , որ մեր Ազգն իւր ազգային լի-  
զուն արհամարհումայ և սյլազգական՝  
այսինքն Գրէքի , Գռանաղի , Իտալացու ,  
Թուրքի , Ռուստի , Ինկլիզի և այլ լի-  
զուք այնաստաբարւում . որով 'ի հորկէ  
Իտալացուս՝ 'ի շինելոց զաւարտն և զաշտա-  
րակն՝ չեմք կարողանալէց նորագել  
մեր դրախտի նման Հայաստան աշխար-  
հն և Հայոց վտառքն : Չարմանալին՝  
բայց մեկնոյն ժամակուծ՝ ցաւալին :

այնէ որ ներկայ ոչ Եապհոյ սուրն  
լինելով և ոչ Մեհրուժանայ անօրէնու-  
թիւնն, մեր Ս. զգն ինքնին իւր կամաւ և  
յօժարութեամբ այս վնասակար սու-  
վորութիւնն մտցրելայ իւր մէջ, և ինչ  
որ հզօր թողաւ որք չկարողացան ա-  
ւել, մի.ք մե զէն ամ.ք կատարում:

Եկայ.ք ուրեմն՝ կորուստ տամ.ք այս  
սուվորութիւնն, որ գտանեմք մեր կո-  
րուսեալ փառ.քն:

Չորրորդ: Հարկաւոր է Ս. րհեստ  
սուվորելն: - Ս. յս ուսմից ներկայ շատ  
զուրկ այ մեր Ս. զգն: Ոչ թէ սկզբից  
այսպէս են.ք ելէլ, քաւ լիցի: Ակայ են  
մեզ մեր աշխարհի հնութիւնքն. որք  
անժխտելի վկայութիւնք են թէ ՚ի սկզ-  
բանէ ամենայն արհեստ ծաղկած ան-  
ելէլ մեր Ս. շխարհումն: Թողում այն  
վրասպազաղ քարն՝ որ եօթն հրաշա-  
լեաց մինն էր համարման, և որ Հայ-

աստանայ սարէրից կտրվէց վան  
 Շամիրամայ 1. մի միայն մին կարճ  
 վկայութիւն բերելով 'ի Խորենացւոյն  
 բաւական համարիմ հաստատել որ աս-  
 անայն աւսակ արհեստաւորօք ծաղ-  
 կած այ ելէլ մեր աշխարհն : Յիշէ սա  
 Գիրք Ա. գլուխ 16 սւմն թէ՛ Շամի-  
 րամ թագուհին զկնի շայաստան տի-  
 բելոյ, կամելով իւր համար մին ամա-  
 բանոց շինել տալ, հրաման այ տալ-  
 ման իւր իշխանութեան ներքոյ եղած  
 ամենայն երկրնէրից՝ ( ընդ որս 'ի հար-  
 կէ պիտի դասեմք և զշայաստան որ նոր  
 էր տիրէլ. ) յամենայն արուեստաւոր  
 գործաւորաց փայտի և քարի, սղնձոյ  
 և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք  
 իցին 'ի յարուեստս զխառութեան, ածել  
 անխափան 'ի փախագեալ տեղին : ' –  
 Նսե հարկաւոր համարիմ Ղուկաս Վ.՝

Ինձինձեան Ստորագրութիւն շին շայ-  
տատանեայց գրքիցն, տպեալ 'ի Վե-  
նետիկ 1822 ամի, մին կարճառօտ վը-  
կայութիւն բերել: Գրէ Հայրենասէրս  
էջ 422 'ի ծանօթութեան, թէ՛

“ Նոր ճանապարհորդ ականատես  
սրտմեաց մեզ՝ քառանիւ չափ եկե-  
ղեցի տակաւին կանգուն կացեալ յայժ-  
ման յաւերակս Հին Անի քաղաքին,  
գմբեթունակք և առ Հասարակ կճեայք,  
որպէս և աւերակք տանց ըստ մեծի  
մասին կճեայք, զի առ եզերքք Ախու-  
րեան գետոյ են՝ ասէ, առ Հասարակ  
Հանք կճոյ, թող զբազմութիւն կիսա-  
ւեր եկեղեցեաց: Պարխապք քաղաքին  
ըստ մեծի մասին անկեալ կան, այլ  
բազում դրունք սլարստաց կճեայ բա-  
րաւորօք կանգուն կացեալ մինչև  
ցայժմ, ունելլալ և երանելիս 'ի վերայ,  
Գտանին և աշտարակք, յորոյ 'ի մի-

ու մն մարթ է գնալ գեանապիոր գաղտ-  
 նի իմն ճանապարհաւ, որ բրեալ կայ  
 'ի ներքուստ Ախուրեան գետոյն, ընդ  
 որ գնացեալ՝ յայնկոյս գետոյն լինի  
 անցանել ընդ երկրաւ, և անդուստ  
 յաշտարակ անդր ելանել: Մակագրու-  
 թիւնք երկաթագրովք յանուն թա-  
 գաւորաց աստ և անդ բազում ուրեք  
 տեսեալ, ուրեք ընթերցեալ ասէր Պա-  
 հապանաց թագաւորաց, և ուրեք այլ մակա-  
 գրութիւն 'ի շիրմի թագաւորաց, ու-  
 րանօր տեսեալ ասէր և տող մի ան-  
 ծանօթ տաւիւք ինքեան, նաև այ-  
 լոց հմտացելոց: Իսկ Չօպան ֆէլիսէ-  
 սին գեղեցկակերտ և ամբողջ, արտա-  
 քոյ պարսպաց կայ 'ի հեռին, զոր շի-  
 նեալ ասեն հովուի ուրուք, որոյ յա-  
 ւուր միում վտարեալ գոլով յեկեղեց-  
 ւոյ առ գծծութեան հանդերձիցն,  
 ինքն վասն իւր իւրովք ծախիւք սր-

տաքոյ քաղաքին շինէ զայս եկեղեցի,  
 հասոյթս սահմանելով նաև 'ի պէտս  
 երկցանց նորուն: յայտնի առնելով  
 յայնժամ զինքն լինել գաղտնի մեծա-  
 տուն: Եւ այսպէս յայնչտի յաւե-  
 րական շայաստանեսոյց աշխարհի՝ մի  
 միայն զայս քաղաք տեսանեմք մնա-  
 ցեալ: սր յայտնի ցուցանէ զիւր զա-  
 ւերակս քարոզ խրումն նախնի մեծու-  
 թեան: սւրանօր եթէ դէպ լինի ումք  
 խնամով ժողովել զայժման զերևեալ  
 մակադրութիւնս, բազմօք օժանդակէր  
 'ի լուսաւորութիւն պատմութեան նախ-  
 նեսց առ 'ի մէնջ ժողովելոց 'ի վերոյ:"

Արդ յայտմ պատմութենէ՝ միջին  
 դարու մեր Նախնեսց մեծագործու-  
 թիւնքն հաջակեալ, կհաստատուի որ  
 ամենայն տեսակ արհեստաւորօք ծաղ-  
 կած այ ելէլ մեր տօնելին շայաստան  
 Թողեալ մարմար քարէ եկեղեցեսց շի-

նու թիւնքն՝ տեսանելոց էք որ դեռի  
 տակիւ ճանապարհի գիւտն՝ որ նոր մեր  
 օրէրու մն մին Քրանսիզ Բրաւնէլ ան-  
 ուամբ գտաւ և Անդոնայ Տէմս դեռի  
 տակումն՝ Ինկլիզի համար շինէց, որ  
 և այժմ հրաշալիաց մինն այ համար-  
 ման աշխարհիս երեսին. նայն գիւտն  
 հարիւրաւոր տարով յառաջ ծանօթ  
 այ ելէլ մեր հնարագէտ Ազգին. որք  
 Անի քաղաքի բերդի միջիցն Ախու բեան  
 գեռի տակումն ճանապարհ ան շինած  
 ելէլ մին կողմիցն ՚ի միւս կողմն:

Մին այլ վկայութիւն ևս կայ՝ փա-  
 ռաւոր վանն Ազգիս, որ է գիւտ և գոր-  
 ծածութիւն վաճառականութեան. զոր՝  
 յայս քան ՚ի հնութենէ հետէ մինչցայ-  
 սօր, անհամեմատ արժանահաւատու-  
 թեամբ ՚ի գործ եզին գրեթէ ընդ ամե-  
 նայն մասունս աշխարհի, որոյ փորձն քաջ  
 ճանաչելով Ռուսաց և Վոլանդացոց

1. Էհայ Տէրու թիւնքն՝ զանազան արտօ-  
 նու թեամբք քաջալերէլան մեր ըզգին  
 դնալ և բնականալ և ծաղկեցուցանել  
 զարհեստ և զվաճառականութիւն յիւ-  
 րեանց աւերութեամբն : Միթէ Զու-  
 դայ եկած Հայերն Պարսկց աւերութիւնն  
 ծաղկեցրէլ չեն և կամ խօջայ Փանոս  
 Քալանթարի հետ չի ելէլ՝ որ Ինկլիզի  
 այն Ինկլիզի Տէրութիւնն՝ 1688 թու-  
 ումն Գաշնադրութիւն այ արարէլ և  
 զանազան արածնութիւնք այ տուէլ  
 Հայոց՝ որ բնակիլեն և ծաղկեցուցա-  
 նեն զՀնդստան : — Ով ցանկանայ լիա-  
 լիւր ծանօթութեան շնորհի վերահա-  
 սու լինի Մինասայ Վ. Բժշկեանց Ճա-  
 նապարհորդութեանն՝ ի Լեհաստան  
 սպեալ ի Վէնէաիկ 1850 տալի և Բօլ-  
 աքս կրնաիւրրէլնա ա՛ն Ինկլիէն ԷՔ-  
 Քէրս՝ սպեալ ի Լոնդոն 1775 :

Եւ լ՝ միթէ և մեր ժամանակնէ

բուժմն մեր ազգի միջում Երհեստաւորք  
 չկան : Կան այժմ : այլ շատ սակաւք  
 կան : և տխուրամք տեսանել որ շատ  
 սակաւք ան միտ դնում արհեստ սովո-  
 բելոյ : Բոլոր Եւրոպիա ցնծման այ ար-  
 հեստով , ամենեքեան յառաջաման ան  
 արհեստով , և մինչև 'ի կատար փառաց  
 հասաման ան արհեստով : Քանի՛ քանի  
 անձինք կան քաջածանօթ՝ որք ար-  
 հեստով բարձրացէլ ան և այսօր ան-  
 դամ ան Մեդիոյ ժողովարանին , Աստ  
 'ի կալիաթա խկ կարող ամք ցուցանել  
 զբազում հիւսունս խաւարանի , դարբինս ,  
 ոսկերիչս և զդերձակս խկ , որք՝ 'ի մի-  
 ջոցի սակաւ աւուրց հարստացեալ՝ յետ  
 ան դառման յիւրեանց Հայրենիս ,  
 Շատոնք կան որ քիմիագործութեամբ  
 կամին հարստութիւն 'ի ձեռս բերել .  
 կապարն «բժիճն» յոսկի փոխարկելով :  
 Մին իշխան՝ որ յոյժ զակատեալ էր

այս արհեստն գտանելոյ, հարցանում  
այ մին օր մին երևելի շայ Պարնի,  
եթէ արդեօք երօփացիք ևս զհեա  
րեն քիսիագործութեան արհեստն գտա  
նելոյ, որում պատասխանի գտանել  
լով թէ արդէն երօփացիք 'ի վազուց  
այդ արհեստն գտեալ են, ցանկամա  
նայ խմանալ զզիարդն, Իսկոյն հանում  
այ Ազնուականն զգմելին չախուն յիւր  
ծոցոյն և ասում այ. «Ահա քիսիագոր  
ծութիւն, տես այս չախուն՝ երկու փո  
ղի երկաթով և ոսկրով շինած, երօ  
փացիք ինչ գինն ան վաճառում. քա  
նի՞ ռուփիք կլինի սորա գինն, և կամ  
այս ժամացոյցս «հա» քանի ռուփոց  
ոսկի կունենայ արդեօք. տես երօփա  
ցիք երեսուն քառասուն ռուփոց ար  
ժողութեան իրն՝ արհեստով հինգ հա  
րիւր կամ հազար ռուփոց ևս աւելի  
ան վաճառում, Ահա ճշմարիտ քիսիա

դործութիւնս, և ոչ այն որում դու  
լնդունայն զհետ երթաս :

Ուրեմն շատ և շատ պիտանի է ար-  
հեսան, և հարկաւոր է մեր Ազգին միտ  
դնել այնմ : Սղալ չեմ լինելէց թէ ա-  
սեմ, արհեսան քան զհարստութիւն  
առաւել օգտակար էմա բոլոյ քանզի  
հարստութիւնն՝ մարդոյս չաջողու-  
թենումն կ'կորնի կգնայ, և թէ այս հա-  
րուստ մարդն ոչինչ մին արհեստ գի-  
տակ չելնի, շատ դժուարութիւն կ'կրի  
իւր օրէրն անցուցանելոյ, այլ արհես-  
տաւորի արհեսան կորնելէց չի, և եթէ  
չաջողութեան մէջ ևս անկանի՝ կարող  
կլինի իւր արհեստովն իւրն սլահել ան-  
կախ և անկարօտ :

Եթէ արհեսան այս քան շահարեթ  
ուսում այ, չո՛ւմ պիտի ուրեմն ջա-  
նամք ամենայն մանկանց, կամ որքանի  
որ կարևոր լինի, մին արհեստ սովորե-

ցուցանել տանք, որ թէ իւրն և թէ իւր Ս. զգին պիտանի և օգտակար լինի :

Հինգերորդ՝ Հարկաւոր սյ Ս խաբանու թիւնն — Ս. 10 մասին ճառի միջում լիովին ցուցած սյ, թէ միաբանեալ կամ ընկերութեամբ բան և գործն առաւել աջողութեամբ գլուխ կ'գնայ. վասն որոյ մեք Հարկաւոր միայն Համարեմք ծանուցանել, թէ միաբանութիւնն որպէս պիտի լինի : Միաբանութիւնն միայն փաղով չէ՝ որ կարեւորէ առել. քանզի՝ գուցէ մինն Հարստութիւն կամ կարողութիւն չունենայ : Ս. 11 գրեթէ ամենայն մարդ՝ մին Հարստութիւն կամ տաղանդ ունի ընկալեալ 'ի Տեառնէ :

Ոմն խելք ունի, որով կարող սյ օգնել. որով կլինի միաբանիլ. մինն փորձառութիւն ունի, և կարող կլինի քաջ խորհրդով օգնել. միւսն՝ վաստակով, կամ բարի ցանկութեամբ, և կամ քա-

Ջալերու թեամբ կարող է միաբանիլ :  
 Միաբանու թիւնն՝ թէ և միշտ օգտա-  
 բեր է վասն մարդոյ, եթէ մարդիկ խ-  
 բեանց իսկ օգուտն ճանաչեն, այլ՝ Ազ-  
 գային բանում ամենայն մարդի սլար-  
 տականութիւն ևս այ միաբանիլ, և թէ՛  
 իւր ձեռնիցն ոչինչ վեր գոլման չել-  
 նի, գոնէ, որպէս ճառումն յիշած այ,  
 կարող կլինի՝ վասն Ազգի քրտնաջան  
 վաստակողաց՝ քրտունքն սրբել, կարող  
 կլինի վաստակն գովել, և գովելով  
 սիրտ տալ՝ որ վաստակոյն սիրտ բռնի  
 և աւելի վաստակի : Այս ամենայնն ևս՝  
 կլինի միաբանութիւն, ախորժելի Աս-  
 տուծոյ և օգտակար Ազգի : Այսու ե-  
 ղանակաւ ամենայն ո.ք՝ ՚ի Տեառնէ ըն-  
 կալեալ իւր տաղանդն կ'չահացանի,  
 և կլսի ՚ի Տեառնէ այն փափազելի ա-  
 սու թիւնն թէ, « ազնիւ ճառայ, բա-  
 րի և հաւատարիմ՝ որովհետև ՚ի փո-

քուդ հաւատարիմ գտար, 'ի վերայ  
 բաղմաց կացուցից զքեզ, մնաւ յու-  
 րախուժիւն Տեառն քո:” Զոր ամե-  
 նայն սրտիւ ցանկամք ամենեցունցդ  
 արժանանալ լսելոյ : Ամէն :



1. Die Welt ist ein Theater  
 2. Die Welt ist ein Spiel  
 3. Die Welt ist ein Traum  
 4. Die Welt ist ein Bild  
 5. Die Welt ist ein Schatten  
 6. Die Welt ist ein Pfeil  
 7. Die Welt ist ein Stein  
 8. Die Welt ist ein Wasser  
 9. Die Welt ist ein Feuer  
 10. Die Welt ist ein Luft

